№ 7—12 (218) XXI ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

# Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

## ՎԵՑԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

(ԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ՔԱՂԱՒԱԾՔՆԵՐ)

---

Ե.-րդ Ընդհանուր Ժողովին որոշման համաձայն, Զ.-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուէր 1911 տարուան մէջ։ Ըստ այսմ ցուցեցան հրաւիրագրերը և Ժողովը տեղի ունեցաւ 1911 օգոստոս 17-էն մինչև սեպտեմբեր 17, նուիրելով մէջին հաշուով օրական երկու, ընդամենը 50 նիստ Օրակարգի գլխաւոր խնդիրներուն։

Տեղեկագրերու ընթերցումէն և բերանացի զեկոյցներէն ետք, Ժողովն անցաւ վիճաբանութիւններուն և տուաւ որոշումներ, որոնցմէ կը քաղենք հոս կարևորագոյնները։

---

## Ա. ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր Ժողովը նկատելով՝

Որ մեր Կուսակցութեան գլխաւոր խարիսխն է հայ աշխատաւորութիւնը,

Որ աշխատաւորութիւնը (գիւղացի, բանուոր, արհեստաւոր և այլն) կազմակերպելով հանդերձ իր տնտեսական շահերուն շուրջ, մոռնալու չէ երբէք թէ մերինին պէս յետամնաց հասարակութեանց մէջ տնտեսական պայքարը կարելի չէ բնաւ յաջող վախճանի մը հասցնել, առանց մղելու քաղաքական ուժգին պայքար մը՝ պետական և ազգային մշակոյթի լայն բարենորոգումներու համար,

Որ պրոպագանդը՝ բանաւոր թէ գրաւոր, պէտք է որ կատարուի հնարաւոր եղածին չափ ուժերու խնայող տնտեսութեամբ, իսկ այդ տնտեսութեան ամենէն բարձր աստիճանին կարելի է հասնիլ ազգային միջավայրի մէջ, ուր կը տիրէ համանմանութիւն մը լեզուի, հոգեբանութեան և զարգացման աստիճաններու։

Որ հայերուն բնակած բազմացեղ և բազմալեզու միջավայրերուն մէջ տակաւին կը տիրեն ազգային խոր հակամարտութիւններ և փոխադարձ անվստահութիւններ—երևոյթ մը, որ կազմակերպութիւններու ներսը կը ստեղծէ անխուսափելի ընդհարումներ՝ փոքրամասնութիւններու և մեծամասնութիւններու միջև, կազմալուծելով վարչական մարմինները նորածիլ միութիւններուն։

Որ նման բաղխումներ անվրէպ տեղի պիտի ունենան այն պարագային, երբ հայ աշխատաւորութեան մէջ ևս առաջ գան կուսակցական բաժանումներ,

Որ հայ աշխատաւորութեան շահերը կրնան իրապէս բարգաւաճիլ այն պարագային միայն՝ երբ դրացի ժողովուրդներու մէջ ևս կազմակերպուած կ'ըլլան աշխատաւորական տարրերը ու երբ միջազգային բովանդակ աշխատաւորութիւնը իր համերաշխ ճիգերը կ'ուղղէ ընդհանուր թշնամիներուն՝ աւատականութեան և կապիտալիզմին դէմ,

Որ հայ ընկերվարական մտաւորականութիւնը, իբր ուելի գիտակից և պատրաստուած տարր մը Թիւրքիոյ մէջ, պարտի իր ուժերուն ներած չափով ղեկավար հանդիսանալ բնակակից ազգերու աշխատաւորութեան.

Կ'որոշէ.

1) Աշխատաւորական կազմակերպութիւնները դնել ազգային և կուսակցական գետնի վրայ, իսկ ուր անհնարին է ատ, առժամապէս կանգնիլ միջազգային՝ անկուսակցական տեսակէտի վրայ։ Բոլոր աշխատաւորական կազմակերպութիւնները անպայման պարտին համերաշխօրէն և միջազգայնաբար գործել տնտեսական ծեռնարկներու մէջ (գործադուլ, պոյքոտ և այլն)։

Դիտող.—ա) Ընդհ. Ժողովը իր բոլոր ձեռնհաս մարմիններուն կը յանձնարարէ արհեստակցական (սէնտիմալ) գործունէութեան ասպարէզին մէջ նախապատուութիւն տալ այնպիսի ձեռնարկներու, որոնք հասունցած են եւ կրնան իրագործիլ մասնակցող աշխատաւորներու ջանքերով,

բ) Շրջանային պաշտ. ժողովները հրահանգներ կը մշակեն իրենց շրջանի աշխատաւորական գործունէութեան համար, հիմնուելով այս որոշումներուն վրայ եւ յարմարցնելով ասոնք իրենց տեղական պայմաններուն:

2) Եռանդուն պրոպագանդ մղել բնակակից ազգերու աշխատաւորութեան մէջ, կազմակերպել անոնցմէ միութիւններ, ի հարկին հրատարակել գրքոյկներ աշխատաւորական հարցերու մասին՝ թուրք և քիւրդ և այլ տեղական լեզուներով, խրախուսել և ջանալ պատրաստել ընկերվարական ոգիով տոգորուած մտաւորական տարրեր, որպէս զի առաջիկային անոնք կարենան ստանձնել ղեկավարութիւնը իրենց նամազգի աշխատաւորներու դատին:

---

## Բ. ԹԻՒՐՔԻԱ

### ՀՈՂԱՎԷՃԸ

Նկատելով որ Համիդեան ռէժիմին տակ Հայաբնակ նահանգներուն մէջ, յատկապէս 1890-էն ի վեր տիրող բռնութեան, աշառութեան, օրինական խարդախութիւններու և օրէնքի շիլ մեկնաբանութեանց շնորհիւ, Հայ հողագործը զրկուեցաւ իր ապրուստի էն անհրաժեշտ միջոցէն—Հ ո ղ է ն, որուն հետևանքով, ինչպէս նաև այլ յարակից պատճառներով՝ Հայ աշխատաւորներու ստուար մասը հարկադրուած եղաւ իր տարեկան հասոյթին մեծագոյն մասը այս կամ այն ձևով լեցնելու հարստահարիչներու և վաշխառուներու գրպանը,

Հաստատելով որ Համիդեան բացառիկ բռնութիւններէն տարագիր արտասահման ապաստանած տասնեակ հազարներով Հայեր, տարիներ շարունակ թշուառ կեանք մը քաշքշելէ ետք, այսօր երբ սահմանադրական ռէժիմին ապաւինած կը վերադառնան իրենց Հայրենիքը, գրաւուած կը գտնեն իրենց հողերը այլևայլ հարստահարիչներէ, որոնք յենած իրենց բիրտ ուժին կամ օրինական խարդախութիւններու՝ կը մերժեն Հայ աշխատաւորին յանձնել իր օրինական սեփականութիւնը,

Ապացուցուած համարելով, թէ աւատական մնացորդներով լեցուն Հայաբնակ նահանգներուն մէջ, հարստահարիչները հողեր յափշտակած են ո՛չ թէ իրենց պէտքերուն համար այդ հողերը մշակելու, այլ անոնց վրայ բնակեցնելու և շահագործելու համար միրիւբաքիւրտեր ու Հայեր, և հոն կուսակցութիւն մը ստեղծելէ ետք՝ հեռզհեռէ իրենց բռնութիւնները տարածելով՝ տիրանալու համար շրջակայ գիւղերուն,

Դիտելով, որ Կովկասի ռուս իշխանութիւններէն իրենց գողութեան կամ աւազակային արարքներուն համար հալածուած տարրեր, Թիւրքիա ապաստանելով, կը շահագործեն իսլամ գաղթականի անունը, օգտուելու համար առ այդ թիւրք կառավարութեան ընծայած մեծամեծ դիւրութիւններէն,

Թէ մինչ այդպիսի փախստականներու հողերը ռուս կառավարութեան կողմէ բացառապէս կը տրուին ռուս գաղթականներու, Թիւրք կառավարութիւնը զանոնք կը տեղաւորէ „ազատ կամ մահլիւլ հողի“ պատրուակի տակ Հայկական հողերու վրայ. զանց ընելով Միջագետքի ամայի դաշտերը և խոյս տալով հողաշատ մահմէտական գիւղերէ, որոնց հանդէպ նորեկ իսլամները անկարող պիտի գտնուէին գործադրելու այն բոլոր ապօրինութիւնները, որոնք անհանդուրժելի ըրած են զիրենք Հայաբնակ գիւղերուն մէջ,

Շեշտելով, որ օսմանեան հողային օրէնքներուն համաձայն հողը օգտագործելու իրաւունքը վերապահուած է զայն մշակողին, մինչդեռ վերջին 30 տարուան մէջ Հայ գիւղացիներուն հողերը յափշտակուած են կա՛մ բռնութեամբ, կա՛մ օրինական խարդախութիւններով և կամ մահուան սպառնալիքի տակ հարկադրելով զանոնք թողելու իրենց հողերը և հեռանալու երկրէն,

Մատնանիշ ընելով միանգամայն, թէ ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս և այժմ դիտուած բոլոր զեղծումներն ու ապօրինութիւնները արդիւնք են կառավարական պաշտօնեաներու աշառութեանն ու անբարեխղճութեանը, և ատ աստիճան մը ևս կը շեշտի շնորհիւ այն պարագային, որ պաշտօնէութիւնը մենաշնորհն եղած է իսլամ տարրին,

Հաստատապէս համոզուած որ—եթէ արտակարգ միջոցներով չդարմանուին Համիդեան բացառիկ ճընշումներուն արդիւնք եղող այս անօրինակ զրկանքները,—Հայ ժողովրդին հոմար մեռած տառ մը պիտի մնայ Սահմանադրութեան աւետած բարիքները, և աստիճան մը ևս պիտի խրախուսուին բոլոր յափշտակիչներն ու զեղծարարները՝ գործելու նորանոր ապօրինութիւններ,

Կ՚որոշէ. Հողավէճի լուծմանն ձեռնարկելու ատեն, իբր ղեկավար սկզբունք, ունենալ հետևեալ կէտերը.

1) 1890-էն ասդին կատարուած հողային և յարակից գրաւումները հոչակել տալ իբր արդիւնք Հայութեան դէմ ուղղուած բռնութիւններու և քաղաքական բացառիկ հալածանքներու։ Հետևաբար 1890-ին գոյութիւն ունեցող Հայ հողային-ջրային սեփականութեան status quo-ի վերահաստատումը նկատել սահմանադրական կառավարութեան արդարամտութեան և Իթթիհատ-Պաշնակցական համերաշխութեան կարևոր պայմաններէն մէկը։

2) Հողավէճը լուծել տալ վարչական եղանակով և խառն յանձնաժողովներու միջոցով, յենուելով օսմանեան հողային օրէնքներուն և անոնցմէ բղխող լրացուցիչ լուսաբանութիւններու։ Վիճելի հողերու և ջրերու նկատմամբ սեփականութեան իրաւունքը ճանչնալ հին վաւերաթուղթեր ներկայացնողին, համաձայն 1909 (1329) օգոստոս 27 պետական Խորհուրդի որոշման։

3) Հալածանքներու երեսէն արտասահման փախած կամ ցրուած և Սահմանադրութենէն ետք իրենց բնագաւառը վերադարձող Հայերուն ընծայել դրամական բոլոր այն օժանդակութիւնները և ապահովութեան արտօնութիւնները՝ որոնք վերապահուած են եղեր մինչև այժմ իսլամ գաղթականներուն։

4) 1890-էն ասդին Հայ հողերու վրայ հաստատուած իսլամ գաղթականները փոխադրել տալ ուրիշ ազատ վայրեր։ Իսլամ գաղթականները այսուհետև տեղաւորել Միջագետք կամ ուրիշ հողաշատ շրջաններ, զանոնք բնակեցնելով 8 ժամէն ոչ մօտ Հայաբնակ գիւղերուն։

Դիտողութիւն.—Ազատ հողերը նշելու ատեն իբրեւ այդպիսին չնկատել գիւղերու արօտատեղիները, անտառները, ճամբաները, ինչպէս նաեւ առանց թափուր արդէն մշակուող արտերը։

5) Հայ գիւղերէն հեռացնել բոլոր այն բռնակալ-

ները, որոնք առնելիք գանձելու կամ այլ պատրուակներով 1890-էն ի վեր բնակութիւն հաստատած են հոն։

Անոնց պահանջներուն օրինաւորութիւնը վերապահել քննելու դատարաններու կամ խառն յանձնախումբերու առջև։

6) Վերաքննել 1890-էն ասոնց աւատականներու և հարստահարիչներու կատարած հողային իւրացումները։ Օրինաւորութեան պարագային՝ այդպիսիներու հողերը (փոխանակութեան կամ մասնաւոր հատուցման մը միջոցով) միացնել մէկ կտորի մէջ, իր բնական սահմաններով։

7) Հողավէճի լուծման հետևանքով անհող մնացած հայ և քիւրդ միրիքաններուն հող տալ պետական խալի հողերէն, քիւրդերուն 8 ժամէն ոչ մօտ իրենց հեռացուած վայրէն։

8) տեղացիներու հետ ազգակցական կամ շահակցական հաշիւներով կապած պաշտօնեաներու փոխարէն կարգել տալ դրսեցիներ։ Ասոնց մէջ հայերու թիւը աստիճանաբար աւելցնել, հասցնելով տեսալ վայրի հայ բնակչութեան ներկայացուցած տոկոսին։

---

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Ժողովը լսելով խորհրդարանական գործունէութեան մասին ներկայ երկու երեսփոխաններու անհատական զեկուցումները, ինչպէս նաև Ժողովին մէջ արտայայտուած թերուգէմ բոլոր կարծիքները, և գտնելով

Որ խորհրդարանական մեր գործունէութիւնը բեղմնաւոր դարձնելու համար անհրաժեշտ է դրամական զոհողութիւններ ընելով՝ աշխատանք կատարել Խորհրդարանէն և նոյն իսկ մայրաքաղաքէն դուրս, պահել յատուկ քարտուղարութիւն և մասնակցիլ ընտրողական պայքարի ծախքերուն,

Որ մինչ երեսփոխանները կ'ընտրուին Դաշնակցութեան բարոյական-նիւթական միջոցներով, գործիչ ընկերներու ստացածին հետ բաղդատմամբ անոնց թոշակները չեն համապատասխաներ կուսակցութեան շարքերուն մէջ գոյութիւն ունեցող ռամկավար աւանդութիւններուն և փոխյարաբերութիւններուն,

Կ'որոշէ.

1) Երեսփոխան ընկերները կը գործեն հաւաքական խորհրդակցութեամբ և պատասխանատուութեամբ, սերտ յարաբերութիւն կը պահպանեն — փոխադարձաբար իրազեկ պահելով զիրար — զիրենք ընտրող շրջաններու կեդր. կոմիտէներու հետ, և կը լուսաբանեն բոլոր խնդիրները աշխատաւոր և ճնշուած խաւերու շահերուն տեսակէտէն։

2) Երեսփոխաններուն, ինչպէս առհասարակ բոլոր դաշնակցական ընկերներուն կ'արգիլուի ընդունիլ նախարարի պաշտօնը։

Ծանօթ. — Յեղափոխական եւ բացառիկ-անցողական շրջաններում միայն՝ դաշնակցական ընկերները կրնան մտնել առ ժամանակայ կառավարութեան մէջ, նպատակով իրենց շրջանի ղեկավար մարմիններուն, բայց նոյն օրէն կը դադրին գործօն անդամ ըլլալէ Կուսակցութեան մէջ։

3) Ազգային. կրթական խնդիրներու լուծման համար դաշ. երեսփոխանները պլոքներ կը կազմեն հայ և ոչ-թիւրք երեսփոխաններուն հետ։ Իսկ տնտեսական և ընդհանուր պետական կարևորութիւն ունեցող խնդիրներու համար՝ պլոք կը կազմեն աշխատաւորական մտաւորականներ և անկրկնայօրէն ռամկավար ընթացք ունեցող կազմակերպութիւններու և տարրերու հետ։

4) Խորհրդարանի ամեն նստաշրջանին՝ դաշնակցական իւրաքանչիւր երեսփոխան, խորհրդարանական յանձնախմբերու մէջ իր աշխատանքէն զատ, կը ջանայ ներկայել առնուազն մէկ ուսումնասիրուած առաջարկութիւն կամ լուսաբանութիւն ընթացիկ կարևոր խնդիրներու մասին (օրինագիծ, ուսումնասիրութիւն, պատճառաբանուած ճառ և այլն)։

5) Երեսփոխան ընկերները տարին 3 ամիս պարտաւոր են անցնել գաւառները՝ աշխատաւոր խաւերուն մէջ, անոնց պէտքերն ուսումնասիրելու և ի հարկին պաշտպանել կարենալու համար։

6) Երեսփոխան թեկնածուների անուանումը կը թողուի իւրաքանչիւր շրջանի ղեկավար մարմին, խորհրդակցութեամբ համապատասխան Բիւրոին և դրացի Կեդր. Կոմիտէներուն, պայմանով որ թեկնածուներուն ցուցակը վաւերացուի նոյն շրջանի Պատգ. Ժողովէն։

7) Դաշնակցութեան ազդեցութեան տակ գտնուած շրջաններուն մէջ՝ դաշնակցական քւէները տուելու են այնպիսի անձերու (դաշնակցական կամ համակիր), որոնք յանձնառու կ'ըլլան պաշտպանել Դաշնակցութեան պլատֆորմը և ենթարկուիլ Դաշնակ. Խորհրդար. Հատուածին կարգապահութեանը։ Միւս շրջաններուն մէջ դաշնակցական քւէները կրնան տուիլ իրենց ուղղութեամբ Կուսակցութեան աւելի մօտ կեցող անհատներուն։

8) Դաշն. Երեսփ. Հատուածը իրը ուրոյն մարմին, կ'ունենայ իր դիւանը։ Երեսփոխանները իրենց միջոցներով պիւտճէ մը կ'ապահովեն, իրենց գրասենեակի, քարտուղարութեան և խորհրդարանական ուրիշ անհրաժեշտ աշխատանքներու համար։

9) Խորհրդարանական հատուածին որոշումները պարտադիր են երեսփոխաններուն համար։

10) Դաշնակցութեան ջանքերով և ազդեցութեամբ ընտրուած երեսփոխանները, ինչպէս և այլ վճարեալ պաշտօններու կոչուողները, իրենց ստանձնած բարոյական պարտականութիւնները կատարելէ զատ, պարտաւոր են նաև նիւթապէս օժանդակել Կուսակցութեան։ Երեսփոխան ընկերներն իրենց հասոյթին 10% (առաւելագոյնը կազմակերպական տուրքին) կը վճարեն իրենց քնակած վայրի կ. կոմիտէին, ի հաշիւ իրենց ընտրական շրջանի Կ. Կոմիտէին։

11) Երեսփոխան ընկերները, ինչպէս նաև բոլոր անոնք, որ կուսակցութեան բարոյական աջակցութեան շնորհիւ պաշտօն մը ձեռք կը բերեն, պարտին իրենց մէկ ամսականը տրամադրել ընտրական պայքարի սնտուկին։

Ծանօթ. — Այն յօդածին տրամադրութենէն ազատ են 1908—1912 նստաշրջանի երեսփոխանները։

12) Այս որոշումներուն անսաստողները կ'ենթարկուին Հիմնական Կանոնագրին կարգապահական յաւելեալ տրամադրութեան։ (Տես երես 29)։

---

## ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Ընդհանուր Ժողովը քննելով կուսակցութեան ներքին՝ ազգային գործունէութեան քաղաքականութիւնը, ինչպէս նաև մեր բռնելիք դիրքը նոյն ասպարէզին վրայ գործող հայ կուսակցութիւններուն հանդէպ,

Գտնելով, որ հայ և անոր բնակակից ժողովուրդներու անտեսական-քաղաքական արդի յետամնաց շրջանին մէջ՝ ընկերվարական-յեղափոխական և արմատական տարրերը անկարող ըլլալով մեծամասնութիւն կազմել և գործադրել իրենց բովանդակ ծրագիրը, հարկադրուած են մասնակի նուաճումներով սահմանափակուիլ; իրենց իտէալներն արծարծելու և համախոհներ գտնելու գործին մէջ,

Ընդունելով որ մեր գործունէութեան վայրերու ընկերային արդի պայմաններուն տակ՝ կենսական կարևորութիւն ունի աւատական ու կղերական մտածողութեան տիրապետումը փոխարինել սահմանադրական սկզբունքներով. (մարդկային ազատութիւններ, ժողովրդապետութիւն, իրաւակարգ), անոնց կիրառումովը, լայնացումովն ու խտացումովը կեանքի մէջ,

Նպատակ ունենալով ապահովել հայուն, ինչպէս և ամեն մէկ ազգի՝ ինքնավարութիւնը իր ազգային մշակոյթին մէջ, նկատելով զայն պետական գործունէութեան ճիւղ մը, իր ինքնավար վարչութեամբ և յատուկ տուրք սահմանելու իրաւունքով,

Գիտակցելով որ ազգային մշակոյթի խնդիրներուն ու սահմանադրութեան կիրառման մէջ՝ մեզի համամիտ և գործակից կրնան գտնուիլ, թէ՛ առաջադէմ կուսակցութիւնները և թէ ազատախոհ չէզոք տարրերը,

Հեշտելով որ Դաշնակցութիւնը իր բարոյական ազդեցութիւնը կը պարտի ոչ միայն իր ծրագրին ու գործելակերպին, այլ և իր ընկերներու անձնուիրութեան, անշահախնդրութեան և միշտ դժուարագոյն պատասխանատուութիւններ ստանձնելու յօժարակամութեան՝ մտքի ու ընկերային կեանքի նոր հորիզոններ բանալու կոչուած աշխատանքներուն մէջ,

Նկատելով վերջապէս, որ Կուսակցութիւնը առաջադրած ունի իրեն՝ իր ծրագրին ու տակտիկին վերաբերող ուղղակի նպատակներ, որոնց նուիրուած պիտի ըլլայ ընկերներու աշխատանքին ու ջանքերուն մեծագոյն մասը,

Կ՚որոշէ.

1) Հետամուտ օրէնքի միջոցով ընդլայնելու Թիւրքիոյ հայոց Ազգային Սահմանադրութեամբ ճանչցուած ինքնավարութիւնը, իբրև պետական իրաւասութեան ու գործունէութեան ճիւղ մը, վերակազմելով՝ ռամկավար, աշխարհական հիմերու վրայ՝ անկէ բղխող վարչական մարմինները. ճնշուած և չունևոր խաւերուն ապահովել ձրի-պարտադիր տարրական կրթութիւն, այդ նպատակին յատկացնելով ազգային կալուածներու հասոյթը, ազգային տուրքը և պետութեան վճարելիք բաժինը ազգային կրթական պիւտճէին։

2) Հ. Յ. Դաշնակցութիւնը իբր կուսակցութիւն և ամբողջութիւն չի մասնակցիր ազգային մշակոյթի գործերուն և հիմնարկութիւններուն։ Կուսակցական շրջաններն ու անհատներն են, որ կրնան մասնակցիլ անոնց՝ առանց հակասելու Կուսակցութեան սկզբունքներուն, միշտ մնալով սական ներշնչողի, ուղղութիւն տուողի, գործակցողի, և ո՛չ թէ տնօրինողի կամ միակ գործադիրի դերին մէջ։

3) Կրօնի և անոր հետ կապուած դաւանական խնդիրներուն ու համապատասխան հաստատութիւններուն հանդէպ՝ դաշնակցականները չէզոք դիրք կը բռնեն, ապահովելով ու յարգելով ամեն մարդու խղճի ազատութիւնը, պատշաճ ու համբերատար վերաբերում ցոյց տալով ամեն տեսակի դաւանանքներու և կրօնական զգացումներու հանդէպ։

4) Երեսփոխանութեան թեկնածուները կ՚անուանուին, եթէ հնար է, Շրջանային Պատգ. Ժողովէն, հակառակ պարագային՝ Շրջանին ղեկավար մարմինէն (Պոլսոյ մէջ՝ խորհրդակցութեամբ Բիւրոյին), որ այդ առթիւ կուտայ ընտրական հրահանգները։ Երեսփոխան ընկերները համարատու են Շրջան. Պատգ. Ժողովին։

5) Երեսփոխան ընկերները Ազգային ընդհանուր և Գաւառական ժողովներու մէջ կը ներկայանան իբրև դաշնակցական խմբակցութիւն։

6) Դաշնակցական ղեկավար Մարմիններու (Բիւրո, կ. Կոմիտէ) անդամները, ինչպէս նաև Խորհրդարանի երեսփոխանները և կէս-պաշտօնական թերթերու խմբագիրները չեն կրնար մտնել Ազգային կեդր. և գաւառ. վարչութիւնների մէջ (քաղաքական ժողովներ)։

Ասոնցմէ դուրս ուրիշ ընկերներ իրենց անձնական պատասխանատուութեան տակ միայն կրնան անդամակցիլ վարչական մարմիններուն, կանխաւ հաւանութիւնն առնելով իրենց Ազգ. Խորհրդարանական խմբակցութեան կամ Շրջանի ղեկավար մարմնին։ Անոնց անդամակցութիւնն ալ կ՚արգիլուի, երբ միասակար դատի Կուսակցութեան տեղական գործերուն համար։

7) Ազգային բոլոր այդ մարմիններուն մէջ աշխատող մեր ընկերները պէտք կը կազմեն յարատև գործունէութեան ընդունակ ազատական ռամկավար տարրերու հետ։

8) Ազգային մշակոյթի հասունցած անմիջական պահանջներուն համար կը մշակուի յատուկ պլատֆորմ, որով պարտին առաջնորդուիլ դաշնակցական երեսփոխանները։

---

## ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ընդհանուր Ժողովը լսելով Դաշնակցութեան և հայ քաղաքական այլ կուսակցութիւններու փոխյարաբերութիւններու մասին զեկուցումը,

Իր ցաւը կը յայտնէ այն ձախողանքին համար, որուն հանդիպած է, իր գործադրութեան տակաւին սկզբնական քայլերուն մէջ իսկ, Ե-րդ Ընդհանուր Ժողովին որոշումով և յանձնարարութեամբ սկսուած համերաշխութեան ծանօթ ձեռնարկը, որ էր.

„Ոչ մէկ ջանք չխնայել՝ յաջողցնելու համար դիմադիր քաղաքական հայ կուսակցութիւններու և խմբակցութիւններու համերաշխ գործունէութիւնը.

Ծանօթ — Իբր այդ ուղղութեամբ նախապատրաստական մայլ՝ Ընդհանուր Ժողովը կը յանձնարարէ Արեւմտեան Բիւրոին՝ հրաւիրել զանազան հայ կուսակցութիւններէ խորհրդակցական ժողով մը եւ ձգտիլ համերաշխութիւն գոյացնել բանի մը անյեւտածգելի խնդիրներու շուրջ — ապահովում Օսմ. Սահմանադրութեան, պաշտպանութիւն ազգային մշակոյթի շահերու եւայլն։

(Տես Որոշումներ Ե.-րդ Ընդհ. Ժողովի)

Ժողովը կը հրահանգէ միանգամայն.

Եթէ հակառակ բոլոր մեր անկեղծ ջանքերուն՝ ապագային ևս անկարելի ըլլայ հայ կուսակցութիւններու ամբողջին հետ համերաշխութիւն պահպանել — յանձնարարել դաշնակցական մարմիններուն գէթ մասնակի համերաշխութեան և գործակցութեան մտնել տեղական վըստահելի խումբերու հետ՝ գործնական այլևայլ ձեռնարկներու շուրջը։

Ժողովն այն համոզումն ունի, թէ համերաշխութեան ձեռնարկներու ձախողելու պարագային՝ միջկուսակցական կռիւներու վերջ տալու լաւագոյն միջոցն է՝ անտեսել հակառակորդներու յարձակումները, չէզոքութեան դատապարտելով բոլոր այն տարրերը, որոնք դրդուած կուսակցական անձուկ տեսակէտներէ ու շահերէ միայն՝ արուեստականօրէն կռիւներ կ'արծարծեն հանրային կեանքին մէջ։

---

## Դ. ՌՈՒՍԻԱ

Էնդհանուր Ժողովը նկատելով, որ Ե.-րդ Ընդհ. Ժողովէն ետք զգալի փոփոխութիւն մը առաջ չէ եկած Ռուսիոյ քաղաքական կացութեան մէջ,

Կ'որոշէ իր ուժին մէջ պահել նախորդ Ընդհ. Ժողովին որոշումը, որ էր.

„Նկատի առնելով թէ Ռուսիոյ մէջ միապետական ռէժիմը՝ որ յենուած է ազնուական հողատէրերու և խոշոր բուրժուազիայի վրայ ու կը շահագործէ աշխատաւոր խաւերը և քաղաքացի միջակ դասը՝ վաղուց չի համապատասխաներ երկրին քաղաքական ու անտեսական հասունութեան.

„Գիտակցելով, որ արտաքին բարդութիւններու և ներքին յեղափոխութեան ճնշման տակ 1905-ին յայտարարուած սահմանադրութիւնը ընդդիմադիր տարրերու տաքիքային սխալներուն շնորհիւ (ներքին երկպառակութիւն, մարտական ուժի տկարութիւն), յետագային էապէս խարխլուեցաւ, ու այսօրուան Պետական Դուման կը հանդիսանայ միայն իբրև նպաստաւոր միջոց ու քող՝ փրկելու կառավարութեան դիրքը թէ՛ ներսը և թէ՛ դուրսը,

„Գտնելով, որ ժողովրդական զանգուածներու վրայ յենող կուսակցութիւնները դրական հետևանքներու կարող են հասնիլ միայն այն պարագային, երբ առանց մոռացութեան տալու կուսակցութեան հեռաւոր նպատակները, կը մարդեն զանգուածները գործնական բայլերով՝ կոնկրետ հարցերու շուրջը (աւատական կարգերու բարձում, հողերու բաշխում, հարկերու թեթևացում և այլն).

Կ'որոշէ.

1) Կազմակերպական շարքերը զօրացնելու և ամրապնդելու պահում՝ ամենամեծ ուշադրութիւն դարձնել ընդհանուր քաղաքական պահանջներու և կուի կարևորութեան, ինչպէս նաև այն միջոցներու վրայ, որոնք կ'ապահովեն անոնց յաղթանակը։

2) Նախաձեռնութիւն ստանձնել՝ հրաւիրելու թէ՛ Ռուսիոյ մէջ ընդհանրապէս և թէ Կովկասի մէջ մասնաւորապէս՝ ընկերվարական և ասոնց համաձայնութեամբ ուրիշ ռամկավար կուսակցութիւններու համագումար մը՝ ընդհանուր պահանջներ, տակտիկ և գործունէութեան ձեւեր մշակելու համար։

3) Այժմու հալածանքներու դէմ միջոցներ ձեռք առնելը թողուլ Դաշնակցութեան Կովկասի ձեռնհաս մարմիններուն։

---

## Դ. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ընդհանուր Ժողովը լսելով Պարսկաստանի կացութեան մասին ներկայացուած զեկուցումը և պատգամաւոր ընկերներու հաղորդած լրացուցիչ տեղեկութիւնները,

Ընդունելով որ պարսիկ ժողովուրդին մէջ արդէն կը կազմակերպուի ու կ'ամրանայ սահմանադրական տարրը, պատրաստ իր արեան գնով պաշտպանելու ձեռք բերուած իրաւունքները,

Հաստատելով նաև, որ Պարսկաստանի մեր կազմակերպութիւնը, որ Ե.-րդ Ընդհանուր Ժողովի կողմէն ընդունուած էր իբրև յեղափոխական գործօն մարմին, մեծապէս նպաստեր է Իրանի մանուկ սահմանադրութեան ամրապնդմանը, միշտ առաջապահ շարքերուն մէջ կուելով յետաշրջականներուն դէմ, ինչպէս սկիզբները՝ Մուհամէտ Ալիի գահընկեցութենէն ետք, նոյնպէս վերջերը՝ անոր արշաւանքին պահուն,

Գոհունակութեամբ կ'արձանագրէ Երիտասարդ Իրանի հերոսական ճիգերը արտաքին ու ներքին թշնամիներու դէմ, և մասնաւորապէս մեր ընկերներուն կատարած կարևոր դերը պատմական այդ պաքարի մէջ.

Նկատելով միևնոյն ատեն, որ յետաշրջական տարրերու յաղթանակը կրնայ քաջալեր հանդիսանալ Թիւրքիոյ յետադէմ տարրերուն և նպաստաւոր՝ Ռուսիոյ միապետական ռէժիմին ուժեղացմանը,

Կ'որոշէ.

1) Ցանձնարարել Կովկասի և Թիւրքիոյ դաշնակցական Մարմիններուն՝ մարտական և զինական ուժերու աւելի մեծ համեմատութեամբ մասնակցիլ Իրանի Ազատագրական գործին։

2) Տալ կեդրոնական կոմիտէի իրաւասութիւններ Թեհրանի կոմիտէին, զօրեղացնելով զայն նոր անդամներով և յանձնարարել Պարսկաստանի երկու կեդր. Կոմիտէներուն՝ փոխադարձ համաձայնութեամբ վարել սահմանադրական ազատութիւններու համար կռիւը։

3) Շարունակել սերտ յարաբերութիւն պահպանել ռամկավար տարրերու հետ, գործակցելով անոնց այն բոլոր պարագաներուն մէջ, երբ անհրաժեշտութիւն կը ներկայանայ պաշտպանելու և սմրապնդելու սահմանադրական կարգերը։ Աշխատիլ անոնց հետ ա) ապահովել տալու՝ հիմնական օրէնքներով՝ մեր ազգային մշակութային ինքնավարութիւնը և պարտադիր տուրք գանձելու իրաւունքը պարսկահայոց Ազգային ժողովին համար։ բ Ջնջել տալու «Կանոն էսասիէն» սահմանադրական ոգիին հակասող բոլոր սահմանափակումները, որոնք հիմնուած են ազգային կամ կրօնական խտրութիւնների վրայ (այսպէս, ոչ-միւսիլմանները դէմ դրուած արգելքը պետական բարձր պաշտօններ վարելու և զինուորագրութեան մասնակցելու ևլն)։

4) Առաջարկել Իրանի սահմանադրական կառավարու-

լեան՝ յարքունիս գրաւել սահմանադրութեան դաւանաՌողներուն կալւածները և յանձնել զանոնք գիւղական համայնքներուն։

---

## Ե. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊՐՕՊԱԳԱՆԴ

### Գրաւոր

#### Ա.—„ԴՐՕՇԱԿ"

1) Կուսակցութեան պաշտօնական օրգանը՝ „Դրօշակ" հրատարակել ամիսն անգամ մը, նոյն դիրքով, բայց կրկին ծաւալով։ „Դրօշակ"ը կունենայ բաժիններ՝ տեսական, յեղափոխական-պատմական, մարտական-գրական, տեղ տալով նաև լուրջ ու ամփոփ տեղեկագրերու՝ երկրին տնտեսական և ընկերային կացութեան մասին։

2) Բացարձակապէս դադրեցնել „Դրօշակ"ի ձրի տարածումը (բաժնեգին ընդունելով տարին 12 համար 5 ֆրանք)։

3) „Դրօշակ"ը հրատարակել Դաշնակցութեան գործունէութեան վայրերէն դուրս։

---

#### Բ.—ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

1) Կեդր. Կոմիտէները Կանոնագրի 161-րդ յօդուածին համաձայն (1907-ի տպ.), իրաւունք ունին թերթ հրատարակելու, պայմանով որ դուրս չ'ելլեն իրենց պրօպագանդի պիւտճէէն։

2) Թերթի մը հրատարակութեան ձեռնարկելէ առաջ, Կեդր. Կոմիտէն կըստանայ հաւանութիւնը Կեդր. Հաշուեքննիչ Մարմնին և իր Բիւրօին՝ ներկայացնելով առաջնոյն իր նիւթական միջոցները, և երկրորդին՝ խմբագրական կազմը։

---

#### Գ.—ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՆԿԱՏԵԼՈՎ

Որ կուսակցական մեր հրատարակութիւններու սպառումը գոհացուցիչ կերպով կազմակերպուած չ'ըլլալով՝ անոնք չեն ծառայեր իրենց նպատակին ու տարիներ շարունակ կը մնան իրը մեռած դրամագլուխ,

Որ այդ երևոյթը մէկ կողմէն հետևանք է անոր, որ հրատարակութիւններու տարածումը ստանձնող անհատները նիւթապէս չեն շահագրգռուած այդ գործով, իսկ միւս կողմէն՝ գրքերու բովանդակութիւնն ու յաճախ ալ լեզուն անմատչելի կը մնան կուսակցութեան լայն խաւերուն,

Որ բանաւոր պրօպագանդը անհրաժեշտ նախապայմանն է գրաւորին յաջողութեանը,

Կ'որոշէ.

1) Համընթաց ուղղութիւն տալ բանաւոր և գրաւոր պրօպագանդին.

2) Փորձել մասնաւոր շահագործման հիմերու վրայ դնել հրատարակութեանց գործը.

3) Ցանձնարարել Արևմտեան Բիւրօին ընտրել ձեռնհաս ընկերներէ Պրօպագանդի Մարմին մը, որ պարտականութիւն ունենայ. ա) Պատրաստել ընթերցանութեան և դասախօսութեան ուղեցոյցներ (ինքնազարգացումով զբաղողներու և պրօպագանդիստներու համար), դասաւորելով արդէն եղած բոլոր հայերէն հրատարակութիւնները, ըստ նիւթերու բովանդակութեան, աստիճանական բարդացումով։ բ) Կազմել համառօտ բառարան մը օտար բառերու և գիտական-մասնագիտական թէրմիներու։ գ) Որոշել նրա հրատարակութեանց նիւթերը, ըստ իրենց աստիճանական բարդացման։ դ) Հսկել անոնց լեզուին մաքրութեան ու պարզութեանը։ ե) Կանոնաւորել հրատարակութեան և սպառման գործը։

Դիտող. — Պրօպագանդի մարմինը կը հայթայթէ դասընկացական Մարմիններու խնդրանքին վրայ եւ անոնց հաշուով՝ դասախօսներու կամ պրօպագանդիստներու համար կարեւոր դասւոած օտար լեզուով գրքեր։

4) Նոր հրատարակութիւնները հետևեալ բովանդակութիւնը ունենալու են.

ա) Յուշեր և էջեր հայ և օտար յեղափոխական կեանքէն։

բ) Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (առանձին դրագներ, ուսումնասիրութիւններ և լն)։

գ) Ընդլայնում և բացատրութիւն Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրին և սկզբունքներուն։

դ) Ընկերային և տնտեսական տեսութիւններ և իրենց լուսաբանութիւնը։

ե) Ուսումնասիրութիւններ հայաբնակ շրջաններու տնտեսական և քաղաքական վիճակի։ Վիճակագրական տեղեկագրեր։

զ) Դիւրամատչելի հրատարակութիւններ գիտական այլ և այլ ճիւղերու վերաբերեալ, նախապատուութիւն տալով անոնց՝ որ կ'արթնցնեն քննադատական միտքը և կը փարատեն արմատացած նախապաշարումները։

է) Թիւրքերէն լեզուով հրատարակութիւններ՝ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան, ծրագրին, ինչպէս նաև տնտեսական և քաղաքական խնդիրներու մասին։

---

### Բանաւոր

Կուսակցութեան բոլոր Շրջանները, ղեկավար Մարմիններն ու ընկերները պարտին իրենց ուժերուն և ժամանակին որոշ մասը նուիրել բանաւոր պրօպագանդին, կազմակերպելով պրօպագանդի դասընթացքներ, և վարել պրօպագանդի գործը, տեղական պայմաններուն պատշաճ եղանակով մը, առանց դուրս ելլելու որոշուած պիւտճէի սահմաններէն։

---

## ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻՆ ՎԵՐԱՔՆՆՈՒՄԸ

Ընդհ. Ժողովը միառմի քննեց Հիմնական կանոնագրին լրացման և բարեփոխման մասին եղած կարևոր առաջարկները, — ասոնց մէկ մասը մնացած նախորդ Ընդհանուր Ժողովէն,—ընդունեց և բէտարկեց կարգ մը փոփոխութիւններ, որոնք պիտի ներմուծուին Կանոնագրին նոր տպագրութեան մէջ, որ լոյս պիտի տեսնէ ի մօտոյ։ Աւելորդ չենք համարիր հոս յիշատակել հետևեալները.

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՀԱՇԻՎՔՆՆԻՉ ՄԱՐՄԻՆԸ

Ժողովը կարևոր դատեց հաստատել Կեդրոնական Հաշուեքննիչ Մարմին մը, իր հետևեալ բանաձևովը.

„Ընդհանուր Ժողովէն կ'ընտրուի Կեդրոնական Հաշուեքննիչ Մարմինը. իր իրաւասութիւններն են.

1) Պատրաստել կուսակցութեան ընդհանուր պիւտճէի նախագիծը։

2) Հակակշռի ենթարկել Դաշնակցութեան բոլոր վարչական մարմիններուն (Բիւրո, Պատասխ. Մարմին, կ. Կոմիտէ և այլն) հաշիւները և ներկայացնել զանոնք Ընդհանուր Ժողովին կամ Խորհուրդին։

3) Հսկել, որ Կուսակցութեան հասոյթներուն բաշխումը կատարուի ըստ պիւտճէին, և թոյլ չտալ որ ո՛եւէ ճիւղին գերադասութիւն տրուի ի վնաս միւսներուն։

4) Հետամուտ ըլլալ, որ Դաշնակցութեան բոլոր մարմինները Կուսակցութեան Ընդհանուր Անտուկին հատուցանեն հասոյթներու որոշած տոկոսը։

5) Պատրաստել տոմարակալութեան միօրինակ սիստէմ մը, պարտաւորիչ Դաշնակցութեան բոլոր մարմիններուն համար։

6) Պատասխանատուութեան կոչել դրամական ապօրինի գործողութիւններու մէջ ամբաստանուած մարմիններն ու ընկերները, կախակայելով զանոնք մինչև դատավարութեան աւարտումը։ Եթէ ամբաստանեալը Պատ. Մարմին կամ Կեդր. Կոմիտէ է՝ իր Բիւրոին հաւանութեամբը, եթէ Բիւրո մըն է ամբաստանեալը՝ Կեդր. Հաշ. Մարմինը միաձայն որոշումի մը յանգելէ ետք, միւս Բիւրոին հաւանութեամբը գումարել կուտայ Հ. Ճ. Դ. Խորհուրդը։

7) Կեդր. Հաշ. Մարմինը, ի հարկին, լիազօր քննիչ կը խրկէ. տեղին վրայ քննութիւն կատարելու համար։

8) Ամեն ռայոնական Ժողով իր շրջանին համար կ'ընտրէ Հաշուեքննիչ Մարմին մը, որ կ'ենթարկուի Կեդրոնական Հաշուեքննիչին՝ նոյն իրաւասութիւններով իր շրջանի մարմիններուն հանդէպ։

9) Կեդր. Հաշուեքննիչը դաշնակցական Մարմիններուն հետ կը յարաբերի Բիւրոներու միջոցով։

### ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷՆԵՐՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՍԱԿԸ

Ժողովը Կեդր. Կոմիտէներուն համար դրամական սակ (կանոնագիր 1907-ի յօդ. 122) որոշեց 10,000 ֆրանք (օսմ. ոսկի 435)։ Այդ գումարին առնուազն 3000 ֆր. (օսմ ոսկի 131) պէտք է գոյացած ըլլայ անդամավճարներէ, 2000 ֆր. (օսմ. ոսկի 87) կազմակերպութեան ջանքերով կուսակցական ձեռնարկներու համար հաւաքուած հասոյթներէ (նուէր, հանգանակութիւն, ներկայացում, վիճակահանութիւն և այլն), իսկ մնացած 5000 ֆր. (օսմ. ոսկի 218) դարձեալ կազմակերպութեան ջանքերով ձեռք բերուած գումարներէ, որոնք կը յատկացուին կուսակցութեան պատակներուն մօտիկ, սկզբունքով համակրելի ձեռնարկներու (դպրոց, գրադարան և այլն)։

Դաւանաբ. — Այս սակի մասին ո՛եւէ բացառութիւն Խորհուրդը միայն կրնայ ընել. նկատի առնելով շրջանի մը տնտեսական կացութիւնը եւ անոր կուսակցական գործունէութիւնը։

### ՅԱՌԱՋԻԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Անդամավճարներու քանակը պատշաճեցնելու համար արդարութեան գաղափարի մը, Ժողովը բաղձալի գտաւ, որ անդամավճարներու տոկոսը (հասոյթին 1—10%) ճշտելու պարագային՝ ընկերները իրենց առաջնորդ ունենան յառաջիկայ սկզբունքը։ Օրինակի համար.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 — 20 | ոսկի տարեկ. | հասոյթ | ունեցողը | վճր. | 1—2 | տոկոս |
| 21 — 40 | „ | „ | „ | „ | 2—3 | „ |
| 41 — 80 | „ | „ | „ | „ | 3—4 | „ |
| 81—100 | „ | „ | „ | „ | 4—5 | „ |
| 101—120 | „ | „ | „ | „ | 5—6 | „ |
| 121—140 | „ | „ | „ | „ | 6—7 | „ |
| 141—160 | „ | „ | „ | „ | 7—8 | „ |
| 161—180 | „ | „ | „ | „ | 8—9 | „ |
| 181—200 | „ | „ | „ | „ | 9–10 | „ |

### ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

Ժողովը որոշեց հետևեալ կարգապահական տրամադրութիւնն աւելցնել Հիմնական կանոնագրին մէջ.

Կուսակցութեան Կանոնագրին և Ընդհ. Ժողովին ու Խորհուրդին որոշումներուն անսաստողները ազդարարութիւն կըստանան պատկան մարմինէն, և եթէ երեք ամսեան տեւողութեան մէջ չուզենան համակերպիլ անոնց՝ Դաշնակցութեան շարքերէն դուրս կը յայտարարուին։ Այդպիսիները եթէ երեսփոխան են՝ անոնց վերընտրութեան կամ պետական պաշտօններու կոչելու դէմ կը մաքառի Կուսակցութիւնը իր բոլոր միջոցներով։

### ՄԵԿՈՒՍԻ ԿՕՄԻՏԷՆԵՐ

Ընդհանուր Ժողովը անգամ մը ևս շեշտելով սերտ գործակցութեան հրամայական անհրաժեշտութիւնը դրացի Կոմիտէներուն միջև, կանոնական սահմանափակումներու ենթարկեց մեկուսի Կոմիտէներու գոյութիւնը։ Առաջիկայ շրջանին մէջ, իբրև այդպիսին, Ժողովը որոշեց ճանչնալ հետևեալ վայրերը, իրենց շրջաններով միասին. Այնթապ, Ատանա, Եգիպտոս և Կեսարիա։

---

## ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ
## ԵՒ
## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Ժողովը նկատելով, որ Հ. Ճ. Դ. Խորհուրդին գումարումը տակաւին մօտալուտ չէ, ընտրեց ինը ընկերներէ Դատական Ցանձնախումբ մը, լիազորութիւն տալով անոր, քննել ու վճիռ տալ, յանուն Ընդհանուր Ժողովին, բոլոր այն գործերու մասին, զորս կը պարունակէր Ժողովին դատական պարութեան Ցանձնախումբն իր աշխատանքներն աւարտելէ ետք, անոր եզրակացութիւններն ու որոշումները մասնաւոր շրջաբերականով մը պիտի հաղորդուին կ. Կոմիտէներուն։

---

## ՀԱՇԻՒԱԿԱՆ

### ՀԱՇԻՒՏՈՒԹԻՒՆ 1907—1911 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

(Ե.-րդ ԵՒ Զ.-րդ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ)

Ընդհանուր Ժողովը յանձնարարեց Կեդր. Հաշուեքննիչ Մարմինին.

ա) Քննել Ընդհ. Ժողովներէ ընտրուած մարմիններու հաշիւները, բ) Պահանջել ու քննել այն մարմիններունը,

որոնք թերացած են հաշիւ տալու նոյն շրջաններուն մէջ, և ամփոփելով այդ բոլորը Ե.-րդ և Զ.-րդ Ընդհ. Ժողովներու Հաշուքննիչ Յանձնախումբերու կատարած աշխատանքներու հետ, հաղորդել ի գիտութիւն Կ. կոմիտէներուն։

---

## ԺԸՆԵՒԻ ՅԱՆ ԳՆՈՒՄԸ

Հ. Յ. Դ. Ամերիկայի Պատգ. Ժողովը առաջարկ դրած էր ընկերներու մէջ հանգանակութեան ձեռնարկել՝ գնելու համար „Դրօշակ"ի խմբագրութեան արդի շէնքը, խոստանալով իր շրջանի իւրաքանչիւր ընկերոջ կողմէ մէյմէկ տօլար։

Ժողովը գնահատելով այն զգացումները, որոնք թելադրած էին Ամերիկայի Պատգ. Ժողովը այդ առաջարկը բերելու՝ Ժընեւի տունը կուսակցութեան սեփականութիւն դարձնելու նպատակով—աւելի պաշտաշ կը գտնէ արդի պարագաներու մէջ, Կուսակցութեան անցեալը յաւերժացնել ուրիշ կարգի ձեռնարկներով, ինչպէս հրատարակել Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւնը, կազմել Յեղափոխական Ալբոմ մը, կառուցանել նահատակ ընկերներու շիրիմները և այլն։

---

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Առաջիկայ Եօթներորդ Ընդհ. Ժողովը որոշուեցաւ գումարել 1913 յուլիս ամսուն։

Յանձնարարուեցաւ սակայն երկու Բիւրօներուն, որ փոխադարձ հաւանութեամբ առժամապէս յետաձգեն անոր գումարումը, եթէ հրատապ և կարևոր խնդիրներ անհրաժեշտ չդարձնեն զայն նոյն պահուն։

---

# ՃԳՆԱԺԱՄ

Այժմ նա ընդհանուր է, համաշխարհային։ Արևելեան, Արևմտեան, Հարաւային և բոլոր միւս այլազան խնդիրները խճողուում են, հիւսուում մի այլանդակ ու ոճրանիւթ քաոսի մէջ և թուում է թէ հեռու չէ այլ ևս... տիտանեան բաղխումների և ընդհանուր տակնուվրայութեան ժամը։

Վաղուց աշխարհը և մասնաւորապէս ասիական մերձաւոր արևելքը չեն ապրել այսպիսի տագնապի օրեր։ Դեռ նոր քաղաքակիրթ մարդկութիւնը դող ու սարսուռով իմացաւ դիւանագիտական մահաշունչ դահլիճներէն դուրս կորզուած երկչոտ յայտարարութիւններից՝ որ ներկայ տարւայ ամառը համաշխարհային խաղաղութիւնը կախուած է եղել մի մազից, որ մօտ է եղել պայթելու պատերազմի ահռելի, համաճարակ կատաստրոֆը և երկու մեծագոյն տիտանները — Անգլիա և Գերմանիա — մինը ծովերի հրամանատար, միւսը՝ ցամաքի՝ քիչ էր մնացել, որ Մարոկկեան աղէտաւոր կնճռի առթիւ, գրոհ տան իրարու դէմ և դարձնեն լուսաւոր Արևմուտքը մարդկային մի չտեսնուած սպանդանոց... Կնճիռը հարթուած է, բաղխումը՝ հեռացուած... աւա՜ղ միայն ժամանակաւորապէս, ոչ ընդմիշտ։ Կապիտալիստական տնտեսութեան ու քաղաքակրթութեան մեքանիզմը իր չարանիւթ արգանդներէն պիտի ծնունդ տայ մշտապէս նորանոր կնճիռների, վէճերի ու բաղխումների. և այսպէս անվերջ թերևս պիտի շարունակի „սպառազէն խաղաղութեան" ու պարբերական ցնցումների եղերերգը, առանց երբէք բաղձալի հաւասարակշիռը տեսնելու... մինչև որ նա ինքը, այդ կապիտալիստական տնտեսութիւնն ու իրաւակարգը, խեղդի վերջնականապէս իր իսկ նիւթած ոճիրների մէջ, մինչև որ ծածանի նրա հսկայ աւերակների վրայ միջազգային սոցիալիզմի Դրօշը։ Մինչ այն՝ թուում է թէ լոկ միայն թոյլ կիսադարմաններ են այն բոլոր խաղաղասիրական ցոյցերը, բողոքներն ու ցասումները, որ կատարուում են այլ և այլ երկրներում. նրանք անհրաժեշտ են՝ իբրև յայտարար ճշմարիտ քաղաքակրթութեան ու ռամկավարութեան ուժերի, նրանք օգտակար ու արդիւնաւոր են, իբրև մշտական սպառնալիք, որ կարող է յաճախ կանխել զօրաւորների յախուռն ու վայրագ թռիչքները, թոյլ չը տալ նրանց՝ նախնի գիւրութեամբ ու թեթևսրտութեամբ շղթայազերծել արիւնոտ նախճիրներ. Բայց նրանք առ այժմ չունին վճռական նշանակութիւն... քանի դեռ զանգուածները բաւականաչափ չեն դաստիարակուած, չեն հասած իրենց շահերի պարզ գիտակցութեան, չեն ազատագրուած բռնաւորների և իշխող դասերի թունաւորիչ, ընդարմացուցիչ ազդեցութիւնից։

Պատերազմը որոտում է արդէն Աֆրիկեան Տրիպոլիսում և սպառնում է տարածուել, ընդլայնել իր ալիքը մինչև Բոսֆոր և Փոքր-Ասիական ջրերը։ Անակնկա՛լ էր։ Մինչ Երիտասարդ Թիւրքիան լաւ թէ վատ զբաղուած էր երկրի ներքին վերանորոգման հրապուրիչ աշխատանքով, վստահ միանգամայն խաղաղութեան յարատևութեան և „բարեկամ" պետութիւնների աջակցութեան վրայ, մինչ Հ. Յ. Դաշնակցութիւնը խաղաղ սրտով գումարում էր իր հեղինակաւոր ատեանի նիստերը և ծեծում հայրենիքի այժմէական, չարատանջ խնդիրները—ժողովրդային ապահովութիւն, կրթական հարց, հողային հարց և այն—մէկէն ի մէկ քաղաքական հորիզոնը մթագնեց, պատերազմը պայթեց, վերստին դնելով բոլորի առաջ հին, նզովեալ, անխուսափելի հարցումը՝ Թիւրքիոյ խաղաղու յարատև պրօգրէսի հնարաւորութեան մասին..

Պայթեց շուտով և Պարսկական տագնապը։ Աւելի սուր և աւելի վտանգալի, քան երբևիցէ։ Ո՞վ

կարող էր գուշակել։ Ո՞վ կարող էր սպասել այդքան յանդուգն պահանջներ ցարի կառավարութեան կողմից, պահանջներ, որոնք պարզապէս խախտում են Պարսկաստանի անկախութիւնը, դնում են այն ռուսական „հովանաւորութեան“ տակ։ Ո՞վ կարող էր մանաւանդ սպասել Անգլիայի կողմից այդքան „զիջող“ վերաբերմունք դէպի Պետերբուրգի գրեթէ բոլոր յաւակնութիւններն ու պահանջները, որոնք միանգամայն դէմ են գնում *անգլօ-ռուս համաձայնութեան* ոգուն ու բառին՝ Պարսկաստանի *status quo*-ի նկատմամբ։ Մէկ վերջնագրի պատասխանը հազիւ առած՝ Ռուսաստանը առաջադրեց Թեհրանի կառավարութեանը մի երկրորդ վերջնագիր, աւելի յանդուգն և աւելի անիրաւ... Այն աստիճան անիրաւ՝ որ անգամ ցարին ու ցարիզմին մշտապէս խունկ ծխող օրգանները *à la Temps* ստիպուած են մեղմաձայն „հաւա՜ր“ գոչել դաշնակից կառավարութեան անօրինակ ոտնձգութիւնների դէմ... Ռուսաստանը ոչ միայն պահանջում է հեռացնել ամերիկացի Մորգան Շուստերին պարսից ֆինանսական ծառայութիւնից, այլ և թելադրում է պարսիկներին, ապագայում ևս, միանգամ ընդմիշտ հրաժարուել օտարներին իրենց պետական ծառայութեան մէջ հրաւիրելու... մի հանգամանք, որ ծայրայեղօրէն վիրաւորական է մի անկախ պետութեան համար և որ դարձնում է այդ պետութիւնը մի սոսկ խաղալիք իր բռնաւոր դրացու ձանկերում։ Այդքանն էլ բաւական չէր։ Ռուսաստանը պահանջում է—պարսից դատարկ, խղճալի պետական գանձարանից—նաև դրամական հատուցումն այն ծախքերի դիմաց, որ նա արել է, իր զօրքերը Պարսկաստան փոխադրելով։

Ժողովրդային բուռն ցոյցերի և սպառնական աղաղակների մէջ՝ Մէջլիսը տենդային ու փոթորկոտ վիճաբանութիւնից յետոյ, որոշեց ճնշող մեծամասնութեամբ՝ յետ մղել այդ երկրորդ վերջնագիրը։

Ի՞նչ կը բերէ մօտիկ ապագան... Մինչ այս մինչ այն, ռուսական զօրքերը կենտրօնանում են Պարսկաստանի որոշ կէտերում, գնում են դէպի Թեհրան, Թաւրիզ—և եւրոպական մամուլի խոշոր օրգաններ հաւատացնում են, որ հասել է Իրանեան պետութեան վախճանը, թէ նա պէտք է բաժանուի տխրահռչակ „համաձայնութիւնը“ կնքող երկու պետութիւնների — Ռուսաստանի և Անգլիայի միջև։

Բանակցութիւնները, այնուամենայնիւ, դեռ շարունակւում են և ռուս կառավարութիւնը հաւաստիացնում է շարունակ, թէ Պարսկաստանի անկախութեան չը պիտի դիպի, թէ ռուս զօրքերը գնում են միայն... *ժամանակաւոր հանգամանքով*։

Կացութիւնը չափազանց ծանր է։ Եթէ անգամ, այդ վերջին հաւաստիացումներն անկեղծ լինին և Պարսկաստանի բաժանութեան խնդիր չը ծագի, դարձեալ այդ դժբախտ երկիրը պիտի շարունակէ թաւալիլ արհաւրաւի տագնապների մէջ։ Նա պիտի հարկադրուի ընդունել վերջնագրի այս կամ այն կէտը։ Այս կամ այն ձևով հիւսիսային արջի ծանր թաթը այսուհետև զգալ է տալու իր չարաշուք ներկայութիւնը Իրանի ճակատագրի յեղյեղումների մէջ։ Վայրագ, բռնակալ կառավարութիւնը, որ իր տան մէջ խեղդել է ամեն ազատութեան ձայն, պիտի ձգտէ վաղ թէ ուշ վերականգնել Պարսկաստանի մէջ իր ցանկալի իրաւակարգը, վերահաստատել Մահմեդ Ալիին իր կորուսած գահի վրայ... Իսկ դա անպայման կը նշանակէ՝ յարատև ու արիւնալի ճգնաժամ փոքրիկ վերածնւող երկրի համար... անվերջ, յուսահատ ճակատամարտներ յեղափոխականների ու յետադէմների միջև, լիակատար ուժասպառում, անիշխանութիւն և ի վերջոյ... գահավիժում, պատառոտում, բաժանում...

Այսպէս է նկարւում հեռապատկերը ռուսական նոր վերջնագրի հանդէպ։ Առայժմ անակնկալի բռնուած Իրանը ողբում է, ըմբոստանում, անիծում է և բողոքում։ Բողոքում է ռուսների, „գիավուրի“ դէմ, բոյկոտի է ենթարկում նրա ապրանքը, կոտորում է ռուսասէր պարսից յետադէմներին, քարոզում է „սրբազան պատերազմ“։ Մինչ Թեհրանը ծփում է արտասովոր ալէկոծութեան մէջ, Եփրեմը 3000 հոգի բախտիարների գլուխն անցած—այսպէս են հեռագրում եւրոպական մամուլին—սլանում է դէպի Ղազուին՝ չափելու ռուսների հետ, կանգնեցնելու նրանց արշաւը Թեհրանի վրայ։

Մեծ յուզմունք և կ. Պոլսում։ Պարսկաստանի ճակատագիրը մասամբ Թիւրքիոյ ճակատագիրն է։ Պարսից տագնապը ուժգին թափով անդրադառնում է Երիտասարդ Թիւրքիայի վրայ և վերջինը ահ ու սարսափով է դիտում իր կրօնակից և դարաւոր հարևանի յօշոտման փորձերը, քաջալերուած Անգլիայի կողմից։ Եթէ Անգլիան *carte blanche* է աւել „Մոսկովին“ Իրանի մէջ, ի՞նչ հիմք կայ մտածելու, որ նոյնպիսին չի տրւել և Թիւրքիայում... Ամպերը—ոչ պակաս խիտ ու չարագուշակ—կուտակւել են և Թիւրքական հորիզոններում։ Տրիպոլիսի պատերազմը ուսերի վրայ, իսկ անդին Կրէտէն ու Յունաստանը, Ռուսաստանից քաջալերուած, դաւում են շարունակ և սպառնում օր աւուր՝ նոր խռովն ու փոթորիկ. անհանգիստ է և Մակեդոնիան. չէտաները յանկարծ նորէն սաստկացրին գործունէութեան իրենց թափը, Բուլգարիան թէև անում է պարբերաբար խաղաղասէր ծանուցումներ, բայց նա ևս սպասում է բարեպատեհ վայրկեանին. իսկ անդին՝ ամենամեծ ոսոխը—դարձեալ նոյն Ռուսաստանը — մէկէն ի մէկ ծառացաւ Երիտասարդ Թիւրքիոյ դէմ, եկաւ չոքեց կոկորդին և պահանջեց ազատ անցք տալ իր ռազմական նաւերին Դարդանելի նեղուցի մէջ—և միմիայն իր նաւերին։

Դա խախտումն է 40 տարուց ի վեր եղած դիւանագիտական հանդիսաւոր դաշնագրի. դա բացարձակ ըսպառնալիք է և Թիւրքիոյ անկախութեան դէմ։ Դարձեալ. . ո՞վ կարող էր գուշակել։ Բայց անցքերը գահավիժումի են շշմեցուցիչ արագութեամբ, միշտ յղի անակնկալներով։ Հինգ հարիւր տարուայ իր անփառ գոյութեան ընթացքում՝ Պոլիսը գուցէ երբէք չի ապրել նման ճգնաժամ. . .

# ՌՈՒՍԱՍՏԱՆ

## ՍՏՕԼԻՊԻՆԻՑ ՅԵՏՈՅ

Ռուս դիւանագիտութեան նոր եռանը. — Նորէն մերձաւոր Արեւելք. — „Դիվերսիոնի՝ փորձեր. — Ներքին քաղաքականութիւնը. — Կոկովցեւ եւ „նոր կուրս“.—Ամենն բան ըստ ինոյն.—Ռուսահայաստանի նահատակութիւնը. — Նորանոր ձերբակալութիւններ ու պատիժներ. — Պոլիցինեան „զապրոս“-ների վերսկսումը.—„Դաշնակցութեան“ դատը. —

Ցարմար վայրկեան է ընտրել հիւսիսային բռնապետութիւնը՝ հաշիւները մաքրելու համար երկու թոյլ հակառակորդների հետ։ Եապօնական հարւածից յետոյ, նա հրաժարւեց Ծայրագոյն Արևելքի իր անուշ երազներից և վերստին փոխադրեց իր ճիգերի ծանրութեան կենտրոնը՝ մերձաւոր Արևելք։ Այնտեղ դիւրին է „գործ տեսնել“։ Այնտեղ իր հսկայ և կոպիտ զանգւածների ուժով նա դիւրութեամբ կարող է խորտակել Թիւրքերի, պարսիկների դիմադրութիւնը։ Եւ ի՞նչ հրապուրիչ ձեռնարկութիւն Պետերբուրգի տխմար հրամանատարների աչքում։ Ո՞րպիսի դիւրին միջոց՝ բորբոքելու—աժանագին յաղթանակներով—շովինիզմի տենդը, հայրենասիրական գինովութիւնը անգիտակից բանակի և անգիտակից զանգւածների մէջ, վառելու միապետութեան և ուղղափառութեան խաւարող ճրագը, խեղդելու ներքին քաղաքականութեան արհաւրալի կնճիռները, շեղելու Ռուսաստանը յեղափոխական մտորումների ճանապարհից. . .

Այդ էր նպատակը Ստօլիպինեան ռէժիմի — վերջին 5—6 տարիների մէջ — այդ է նպատակը և ստօլիպինեան արժանաւոր յաջորդների։ Մարդիկ փոխւում են, իրերը, սակայն, շարունակում են իրենց պղտոր, յուսահատեցուցիչ ընթացքը։ Մի վայրկեան կար, Ռուսաստանի վայրագ սատրապի սպանումից յետոյ, երբ լաւատես հոգիները խօսեցին վերստին ռուսական „գարունի“ մասին։ Մի Տօլմաչեւի հեռացում, մի քանի երկչոտ „ազատամիտ“ կարգադրութիւններ, նոր մինիստր Կոկովցովի կողմից բաւական էին յուսավառելու նահատակ երկրի ազատութեան բարեկամներին.. Եւ ի՞նչպէս չը յուսավառուէին, միթէ՞ կարող է անվերջ յարատևել այս կօզակային բռունցքի ռէժիմը։ Մի՞թէ պատմութիւնից և ամենօրեայ փորձերից ոչի՞նչ, ոչինչ չը պիտի սովորին այդ բթացած ու գազանացած բիւրօկրատները, որ վարում են հարիւր միլիոնաւոր ժողովրդի ճակատագիրը։ Մի՞թէ այդ քարացած վիթխարիի — Չինաստանի — ազատագրական հրդեհն անգամ ոչինչ խրատական չը պիտի բերէր Պետերբուրգի սառնաշունչ դահլիճներին, չը պիտի հասկացնէր, որ ապարդիւն են ու ժամանակաւոր դրակօնական բոլոր օրէնքները, որ Ռուսաստանը մնում է իսպառ կղզիացած, շրջապատւած բոլոր կողմերից սահմանադրական պետութիւնների օղակով, որ անխուսափելի է նաև ցարիզմի հաշւեյարդարումը... Ոչի՞նչ։ *Plus ça change, plus c'est la meme chose!* Կոկովցեվ կրկնում է Ստօլիպինին։ Ֆինլանդիայի վերաբերմամբ արտասանած իր ճառը բաւական եղաւ՝ փարատելու „լիբերալիզմի“ բոլոր պատրանքները։ Եւ միամտութիւն կը լինէր աւելին սպասել մի տիպարէինոֆիկից, որի շրթները արտասանեցին մի երկու տարի սրանից առաջ, Պետական Դումայի մէջ, հռչակաւոր, պատմական ֆրազը. „փա՞ռք Աստուծոյ, մենք դեռ չունինք պարլամենտ“։

„Նոր կուրսը“ ոչինչ չունի նոր։ Ռուսական ձմեռը շարունակւում է։ Շմեռ է ապրում մասնաւորապէս Ռուսահայաստանը։ Բանտերը մնում են լեցուն։ Նոր ձերբակալութիւններ ու պատիժներ։ „Թափը“ ոչ թէ չի իջնում, այլ հետզհետէ բարձրանում է, արագանում է։ Ահա վերսկսւում են և գօլիցինեան „զապրոս“-ները։ Բիւրօկրատիան հոտոտում է մեր ազգային խղճուկ հաստատութիւնների շէմքերում, հարցեր է ուղղում Բագւի Հայոց Մարդասիրական Ընկերութեանը, Կուլտուրական Ընկերութեանը, հետաքրքրւում է նրանց վիճակով. „ինչպէ՞ս են արդեօք ղեկավարւում, քանի՞ ճիւղ ունին և ո՞րտեղ ունին“ և այլն։

Եւ այդ ծանր, հեղձուցիչ մթնոլորտի մէջ պատրաստւում է եռանդով այսպէս կոչւած „Դաշնակցութեան“ դատավարութիւնը. Պետերբուրգը բացառիկ միջոցներ է ձեռք առել, կառավարիչ Սենատը ընտրել է իր միջից յատուկ ատեան, ընտրւել է նոյնիսկ յատուկ մասնաժողով՝ դատավարութեան տեխնիկական պատրաստութիւնները հոգալու համար, փնտրում են յատուկ սրահ, ուր կարելի լինի անվտանգ գումարել երկարաձիգ նիստերը—չէ՞ պիտի դատեն „կովկասցիներին“ և նրանց „ամենամոլեգին“ ներկայացուցիչ — „դաշնակցականներին“... Մեծ „պարադով“, արտակարգ, չը տեսնւած հանդիսաւորութեամբ՝ տեղի կունենայ շուտով—առաջիկայ յունւար ամսում —չորս տարուց ի վեր սպասւող ու ձգձգւող այդ մեծ դատը, ամենամեծը Ռուսաստանի յեղափոխական պատմութեան մէջ։

# ՓԱՂԱՓԱԿԱՆ

## ՆՈՐ ԹԻՒՐՔԻԱՆ

## IX

## ԿՐՕՆԱԿԱՆ ՊՐՕԲԼԵՄԸ

Եւրոպական անաչառ և անկողմնապահ գիտութիւնը, կրօնական-ցեղային նկատումներէ ազատագրւած՝ ցոյց տւեց մահմեդականութեան թերի կողմերուն հետ նաև անոր առաւելութիւնները, որոնք յամենայն դէպս նշանակալից են և արժէքաւոր։ Մահմեդականութիւնը իր արտաքին բիրտութեան և անիրաւութեան մէջ կը պահէր բարոյականութեան և արդարութեան սաղմը։ Ընկերաբաններու և պատմաբաններու բարեխիղճ հետազօտու-

թիւնները ցուցուցին, որ այդ «բարբարոս կրօնին» մէջ ևս բարոյական, քաղաքակրթական տարրեր կան։

Մահմեդականութիւնը հին, խաւար, արիւնահեղ դարերուն նշանակելի սկզբունքներ բարոզեց։ Արաբական փոթորկոտ ու ահարկու ժողովրդին մէջ աւելին ըսել՝ կը նշանակէր միանգամայն անգործնական և ապարդիւն ըլլալ։ Միւս կրօնները հեռաւոր իդէալներ տուին, անկարելի պահանջներ ըրին, կամեցան մարդկութիւնը մէկ հարուածով և մէկ պատուիրանով յաւիտենապէս ազնուացնել, ձգտեցան բոլոր չարիքը մէկ անգամով սրբագրել։ Անոնք միշտ անհասանելի մնացին և դարձան գրքերու յաւերժական երազանքները։ Մահմեդ կամեցաւ իրագործելին ներկայացնել, հնարաւորը ուսուցանել։ Անիկա հեռաւոր ապագաներու վսեմ և սքանչելի իդէալներով չտարուեցաւ, չ՚ոգևորուեցաւ։ Այստեղ է անոր վարդապետութեան թերութիւնը և առաւելութիւնը միանգամայն։ Ան գերադասեց ներկայի չափաւոր, հասանելի բարիքը։ Ան նախընտրեց կեանքին համեմատական զարգացումը, հնարաւոր ազնուացումը։ Ան չմտածեց, որ դարեր յետոյ իր կրօնքը, իր ուսմունքը կրնայ թերևս դադարել յառաջադիմութեան գործօն ըլլալէ և դառնալ արտայայտիչ յետադիմութեան ու չարիքի։ Մահմեդ կամեցաւ ժամանակի հասարակութեան աղաղակող արատները շտկել և անոր խախտուած, աւերուած բարոյականը վերանորոգել։ Այս գիծը անոր վարդապետութեան համար յատկանշական է։ Մահմեդական կրօնքի տիրապետող, բնորոշ ոգին հոս կը կայանայ։

Իսլամիզմի դաւանաբանական մասը, անոր աստուածաբանական տեսութիւնը միւս կրօններէն թերևս աւելի պարզ է և յստակ։ Միաստուածութեան գաղափարը բարդուած չէ զանազան մթին ու կնճռոտ յաւելումներով։ Աստուած մէկ է — ահաւասիկ այն չափազանց մերկ բանաձևը, որ կը յայտարարէ Մահմեդի կրօնքը, որոշ, հասկանալի ու դիւրին։

Չկայ երրորդութեան խճճուած ու ոլորապտոյտ տեսութիւնը։ Չկայ երեք համազօր աստուածներու՝ հօր, որդու և հոգու բնաւորութիւններու և էութիւններու դժուարին պրօբլեմը։ Չկայ անոնց յարաբերութիւններու անլուծելի հանգոյցը։ Միաստուածութիւնը բարոզուած է իր ամենապարզ ձևին մէջ։

Իր վարդապետութեան բնազանցական, դաւանաբանական մասին մէջ ևս Մահմեդ ձգտած է գործնական ըլլալ։ Ներկայացնել, բարոզել այն, ինչ որ մարդկանց մեծամասնութեան համար պարզ է, դիւրին և ըմբռնելի։ Նոյն տեսակէտը, գործնական մտահոգութիւնը ղեկավար կը հանդիսանայ — ինչպէս ըսինք — նաև հասարակական-քաղաքական ուսմունքի մէջ։ Իր պահանջները, իր հրահանգները, իր հրամայականները այնպէս չեն, որ անկարելի ըլլայ անոնց գործադրութիւնը։ Անոնք վեր չեն մարդկային ուժերէն և կարողութիւններէն։ Այս ընդհանուր տրամադրութեան մէջ պէտք է որոնել բացատրութիւնն ու մեկնաբանութիւնը այն մէկ քանի չարիքներուն, որոնք թոյլատրուած են մահմեդականութեան կողմէ։

Մահմեդական կրօնքի ոգին, կարելի է ըսել, ընդհանրապէս ռամկավար է։ Անոր դաւանանքի համաձայն՝ հաւատացեալներու մէջ որևէ խարութիւն չկայ։ Ամենն ալ հաւասար են Երկնքին և Աստծու առջև։ Թերևս մասամբ այս է պատճառը, որ դարերու ընթացքին մահմեդական արիստոկրատիա չէ կազմակերպուեր և չէ զարգացեր։ Իսլամական հասարակութիւններու մէջ այս երևոյթը իրօք նշանակալից է և ուշադրութեան արժանի։

Միւս կողմէն՝ Մահմեդի վարդապետութեան վարչական մասը այնպէս է կազմուած, որ մնայուն ու ամենօրեայ պաշտօնէութեան կարիք չէ զգացուեր։ Այդ ուսմունքը կեանքի մէջ մարմնացնելու և մշտնջենաւորելու համար չէ հարկաւորուած եկեղեցական այն հաստատութիւնը, որ այնքան խոշոր դեր կատարեց քրիստոնէութեան նկատմամբ և քրիստոնեայ հասարակութիւններու մէջ։ Մահմեդական հաւատացեալը կրնար իր կրօնական պարտքը կատարել առանց որոշ դասի բացարձակ անհրաժեշտութեան։ Մինչդեռ քրիստոնէի կրօնական պարտականութիւններուն կատարման ու գործադրութեան մէջ ամեն քայլափոխում հարկաւոր է կղերականի օրինական միջամտութիւնը — մահմեդականի համար այդ օրինապէս անհրաժեշտ չէ։ Եկեղեցին և անոր հետ կապուած կղերականութիւնը քրիստոնէութեան դարաւոր բեռն եղան. բեռ, որմէ չէր կրնար ազատիլ քրիստոնեայ համայնքը։

Մահմեդականութեան մէջ կղերականութիւնն այդ դերը չկատարեց և չէր կրնար կատարել՝ ուսմունքի էութեան իսկ հետևանքով։ Կրօնաւորն այնտեղ կրօնքի պարզ մեկնաբանն է։ Անոր պաշտօնը, անոր նշանակութիւնն ու ազդեցութիւնը հասարակականապէս և քաղաքականապէս սահմանափակուած է։ Անիկա վարչական-տնտեսական այն բացառիկ առանձնաշնորհները, այն խոշոր գործառնութիւնը, չունեցաւ, ինչ որ քրիստոնեայ կղերականութիւնն ունեցաւ դարերու երկարատև ընթացքին, լայնածաւալ տարածութիւններու վրայ։ Մահմեդական հոգևորականութեան բացասական դերն ևս, անտարակոյս, շատ խոշոր է և նա երևցաւ մասնաւորապէս կրօնին պահպանողական, հակամարդկային, հակաքրիստոնէական մեկնաբանութեան մէջ։

Հողային սեփականութեան նկատմամբ ևս Մահմեդի վարդապետութեան ռամկավար տրամադրութիւնը նշանակելի երևոյթ է։ Այդ ուսմունքի համաձայն՝ նուաճուած հողը մասնաւորին չէ պատկաներ. անիկա պետութեան սեփականութիւնն է։ Կողոպուտներու և աւարի ժամանակ — որքան ալ այդ ամենը մասնաւոր բնոյթ կրեն — այնուամենայնիւ մասնաւոր մարդիկ, այլ և այլ ուժեղներ իրաւունք չունէին հողի տերը դառնալու։ Կենտրոնական պետութիւնը, որ մահմեդական հասարակութիւններու մէջ այնքան թոյլ, այնքան անկարող էր, որ հեռաւոր նահանգներու վրայ իշխանութիւն կամ ազդեցութիւն չունէր գրեթէ՝ դարձեալ իր հրամանատարութեան տակ կը պահէր հողային տարածութիւնները և խստութեամբ կը մերժէր որևէ մասնաւոր սեփականութիւն անոնց վրայ։ Կուսակալները, կառավարիչները, նուաճողները կրնային սեփականել ժողովրդի հարկը, կրնային վերցնել հողի եկամուտը, կրնային ամեն տեսակ կամայականութեան և հարստահարութեան ասպարէզ դարձնել հեռաւոր կալուածները — բայց ոչ մէկ կերպ չէին կրնար անոնց սեփականատերը հանդիսանալ։ Մահմեդական երկիրներու, իսլամ ժողովուրդներու դարաւոր նուաճումներու և աշխարհակալական շարժումներու պատմութեան մէջ այդ գիծը կարևոր առանձ-

նայատկութիւն կը ցուցահանէ։ Այդտեղ կազմուեցաւ բիւրօկրասի, վարչական հարստահարութիւն, պաշտօնէութիւն, որ մինչև օրս ալ թիւրք երկրի ճակատագրի վրայ մեծ ազդեցութիւն հանդէս կը բերէ։ Բայց աւատականութիւն եւրոպական իմաստով մահմեդական պատմութիւնը չճանաչեց այնպէս խորունկ, այնպէս ծաւալուն, այնպէս յարատև...

Սեռերու հաւասարութեան համար Մահմեդ շատ բան ըրաւ։ Աղջիկներու և արու զաւակներու այն սոսկալի տարբերութիւնը, որ գոյութիւն ունէր Արաբիոյ մէջ—մահմեդական կրօնքին կողմէ խիստ դատապարտութեան արժանացաւ։ Այն հասարակութեան մէջ—ուր նորածին աղջիկ զաւակը վնասակար և աւելորդ իր կը համարուէր և ուր անոնց դժբախտ ոչնչացումը կենդանի թաղումը յանցանք չէր դիտուեր—Մահմեդ քարոզեց, հարկադրեց, պահանջեց՝ հաւասար սիրով խնամել երկու սեռի զաւակներն ալ։ Այս մարդասէր վերաբերմունքը, անիրաւուած անմեղներու այս ջերմ պաշտպանութիւնը քաղաքակրթիչ իրողութիւն էր այնպիսի արիւնարբու միջավայրի մէջ...

Բազմակնութեան հաստատութիւնը—կանանց անհաւասարութեան այդ բնորոշ, հինաւուրց ձևը—Մահմեդ չվերացուց սկզբունքով, բայց շատ նշանակելի չափերով մեղմացուց անոր դառնութիւնը և չէզոքացուց անոր վնասները։

Անկարելի էր մէկէն, թէկուզ ահաւոր ու խստասիրտ պատուիրանով, վերացնել այն վաղեմի սովորութիւնը, որ արմատացած էր Արաբիոյ բարքերու մէջ։ Մահմեդ չձգտեց այդ անիրագործելի իդէալին, մտածելով որ կեանքի դժբախտ պատկերը իր հրահանգի համաձայն չի փոխուիր։ Ատոր փոխարէն անիկա սահմանակեց օրինաւոր կանանց թիւը, որ մէկ տղամարդ կրնար ունենալ։ Ասկէ զատ՝ իսլամի հիմնադիրը չափազանց ծանր պայմաններ հարկադրեց բազմակնութեան սիստեմէն օգտուողներուն։ Հաւասար և արդարամիտ վերաբերմունք դէպի բոլոր կանայք։ Ասոնց ամենուն ալ օրինական պահանջներուն ճշգրիտ գոհացում։ Նիւթական հաւասար ապահովութիւն և խնամք։ Տղամարդիկ պարտաւոր էին կատարել իրենց վրայ ծանրացող բոլոր հրամայականները, հակառակ պարագային՝ պիտի արդարադատութեան առջև քաշուէին ու պիտի ստանային իրենց արժանի պատիժը։

Այս բոլոր դժուարին պարտականութիւնները մէկ նպատակ ունէին—գործնականապէս անհնարին դարձնել բազմակնութեան սովորոյթը։ Մահմեդ այդպիսով կը ձգտէր իրականացնել այն, ինչ որ չկամեցաւ ընել մէկ հատիկ պատուիրանով։ Բացի այդ՝ Արաբիոյ մարգարէն կը յայտարարէր, որ Աստուած ցաւով ու դժուարութեամբ կը թոյլատրէ բազմակնութիւնը և որ առհասարակ լաւագոյն է մէկ կին ունենալ։ Այսօր արդէն մուսուլման երկիրներու գործնականի մէջ բազմակնութիւնը բացառութիւն է, իսկ միակնութիւնը ընդհանուր երևոյթ։

Իսլամը բարենորոգումներ մացուց նաև կանանց վիճակի մէջ։ Մինչև Մահմեդ՝ անհաւասարիմ կանայք ամենախիստ դաժան պատիժներու կ'ենթարկուէին Արաբիոյ կասկածոտ, կրքոտ ու պատերազմիկ ժողովուրդներու մէջ։ Մահմեդական կրօնքի համաձայն՝ կին թէ տղամարդ, անհաւասարմութեան պարագային կը պատժուին հաւասարապէս։ Եւ եթէ մէկը առանց հիմնաւոր փաստերու կասկած ունի մէկ առաքինի կնոջ նկատմամբ՝ պիտի ենթարկուի խիստ հատուցման, և անոր վկայութեան այլևս հաւատ չպէտք է ընծայուի, „որովհետև շար է“... Կինը իրաւունք ունի սեփականութեան և կրնայ ժառանգել իր ունեցածը, առանց ամուսնու համաձայնութեան։ Ապահարզանը թոյլատրելի է։ Եւ այսպէս՝ Մահմեդ որքան ալ կնոջ հաւասարութեան իդէալներ չէ ներկայացուցեր՝ յամենայն դէպս աշխատեր է թեթևցնել անոր ճակատագրի դժուարութիւնը և իրապէս բարելաւել անոր վիճակը։

Այս տեսակէտով՝ մահմեդականութեան քանի մը սկզբունքները բարոյական են ու քաղաքակրթական, մանաւանդ եթէ ի նկատ առնենք այն եղերականօրէն դաժան միջավայրը, ուր հարկադրուած էր գործել, շարժուիլ, ուսուցանել Արաբիոյ Մարգարէն...

Ստրկութեան հարցը մահմեդականութեան ամենավիրաւոր ու ամենապատասխանատու կողմն է։ Հոս ալ Մահմեդ չկրցաւ կամ չկամեցաւ արմատական ըլլալ։ Անիկա սկզբունքով չմերժեց ստրկութիւնը և կտրականապէս չ'արգիլեց անոր գործադրութիւնը։ Սակայն այստեղ ալ կարևոր մեղմացում ու նշանաւոր ամոքում մացուց։ Ստրուկ կինը ամուսնանալով իր տիրոջ հետ՝ պիտի ազատուէր։ Ստրուկ անհատը կորցնելով իր տէրը՝ պիտի դարձեալ ազատուէր։ Բացի այս և ասոնց նման ամոքումներէն՝ Մահմեդ առաջարկեց բոլոր տէրերուն՝ ազատել սերունդները։ Ասուած ոչինչ չի ստեղծեր աշխարհիս վրայ, որ նրան այնքան հաճելի ու թանկ ըլլար, որքան մէկ ստրուկի ազատութիւնը“, բարձրաձայն յայտարարեց Մարգարէն Արաբիոյ լայնածաւալ անապատներու մէջ։

Իսլամական կրօնը տարածուեցաւ մեծ արագութեամբ աշխարհիս չորս կողմը։ Ափրիկա, Ասիա, Եւրոպա, ամենուրեք անոր յաջողութիւնը նշանակելի եղաւ։ Յունական և հռոմէական քաղաքակրթութիւնները չէին մտեր Ասիոյ և Ափրիկէի հեռաւոր վայրերը։ Անոնց ազդեցութիւնը գլխաւորապէս քաղաքներու մէջ էր կեդրոնացած։ Արաբական քաղաքակրթութիւնն ընդհակառակը մինչև Ասիոյ ու Ափրիկէի խուլ գիւղերը մտաւ։ Այդ քաղաքակրթութեան հետ կը տարածուէր նաև Մահմեդի վարդապետութիւնը։ Արաբական գիտութիւնը, գրականութիւնը, ճարտարարուեստը մահմեդականութեան հետ միասին ծաղկեցին, յայտնի չափով բարգաւաճեցին։ Եօթներորդ դարէն սկսեալ մինչև տասներկուերորդ դարը քաղաքակրթութեան կեդրոններ էին Սիրիան, Եգիպտոսը, Սպանիան։ Եւ այս փայլուն մտայնութեան ու շքեղ քաղաքակրթութեան հետ մահմեդականութիւնը հակասութեան մէջ չէր։ Հնարաւոր եղաւ այդ երկու ուժերու համագոյութիւնը (coexistence)։ Այն ժամանակ, երբ մահմեդական երկիրներու մէջ կը ծաղկէր գիտութիւնը և գեղարուեստը՝ Եւրոպան գրեթէ բարբարոսութեան դարը կապրէր։ Յետագայի Եւրոպական քաղաքակրթութիւնը մասամբ արևելեան յիշեալ քաղաքակրթութեան ազդեցութիւնը կրեց։ Խաչակիրները մահմեդական երկիրներու երկարատև շփումէն օգտե-

ցան դրականապէս և այդ ձևով շատ բան հաղորդեցին Եւրոպային։

Տասներեքերորդ դարէն սկսեալ իսլամիզմի յաղթական զարգացումը կանգ առաւ։ Մահմեդի կրօնը յետագայ դարերու մէջ այլ ևս առաջւայ փայլը չունեցաւ։ Անիկա ապրեց մեծ տագնապ, բայց և յաջողութեամբ անցուց այդ տագնապը։ Այսօր մահմեդականութիւնը միւս կրօններէն պակաս կենսունակ և առողջ չէ։ Զնայելով որ Եւրոպական մեծ, հզօր պետութիւններու կարևոր աջակցութենէն զուրկ է անիկա՝ այնուամենայնիւ անոր տարածումը թերևս աւելի արագ և աւելի դիւրին տեղի կունենայ, քան քրիստոնէութեան տարածումը։ Եւրոպական միսիոնարներու կազմակերպած խմբերը, նիւթական-դրամական ահագին կարողութեամբ, քաղաքական ուժին օժանդակութեամբ չեն կրնար մրցել մահմեդականութեան հետ։ Նախնական կոպիտ, պրիմիտիվ ժողովուրդներու մէջ իսլամութեան յաջողութիւնը ապահովուած է։ Հընկաստան, Զինաստան և այլուր անոր հետևողներու թիւը մեծաքանակ միլիոններով կը համարուի։

Կը կարծուէր, որ եթէ քրիստոնեայ պետութիւնները նուաճեն մահմեդական երկիրները—իսլամիզմի աճումը կանգ կառնու և հետզհետէ բոլորովին կ'ոչնչանայ։ Սակայն պատմական փաստերը հակառակը ապացուցին։ Անգլիոյ, Ռուսաստանի, Ֆրանսիայի տիրապետութիւններէն ետքը մահմեդականութիւնը բնաւ չկամեցաւ տեղի տալ։ Անոր կենսական ուժերը նոյնքան շատ են այսօր, որքան միւս կրոններունը։

—

Կրօնական պրոբլեմի քննութեան ընթացքին մենք աշխատեցանք երեք սկզբունք պաշտպանել։ Նախ, որ կրօնները պատմական իրողութիւններու վրայ ընդհանրապէս վճռական, ճակատագրական ազդեցութիւն չեն ունեցեր և որ մասնաւորապէս հայ կեանքի անցեալ պատմութեան մէջ մահմեդական և քրիստոնեայ տարրերու ընդհարումը միմիայն կրօնական ընդհարում չէ։ Երկրորդ, որ ժամանակի առաջխաղացման հետ միասին կրօնական ազդեցութիւնները նշանակելի կերպով տեղի կուտան և որ կրոններն իրենք, ազդուելով կեանքի հարկադրիչ պայմաններէն՝ բնաշրջումի, էուոլիւսիոնի յարակայ օրէնքին կ'ենթարկուին։ Երրորդ, որ մահմեդականութեան վարդապետութիւնը, միանգամայն հակաքաղաքակրթական ուսմունք չէ կարելի համարել, որ երկար դարեր քաղաքակրթութիւնն ու մահմեդականութիւնը ապրեր են միասին և որ անոնց համագոյութիւնը անկարելի բան չէ։

Պատմական-ընկերաբանական այս սկզբունքները տարբեր ճանապարհներով և տարբեր ուժով կուգան պատասխանելու հետևեալ հարցին, որ Երիտասարդ Թիւրքիոյ համար առաջնակարգ նշանակութիւն ունի—Արդեօք օսմանեան երկիրը կրնա՞յ յառաջադիմել, քաղաքակրթուել, եւրոպական հիմնարկութիւններն ու գաղափարները իր մէջ խորապէս իրագործել՝ մահմեդական ըլլալով հանդերձ։ Արդեօք մահմեդական կրօնը երկրի արմատական, հիմնական վերածնութեան դէմ անանցանելի խոչընդոտ չի՞ ներկայացներ։ Արդեօք օսմանեան բոլոր ժողովուրդները—քրիստոնեաներն ու մահմեդականները—կրնա՞ն ապրել միասին, միևնոյն պայմաններու մէջ, քաղաքական-հասարակական միևնոյն վարչակարգի ներքև, ապրել խաղաղ, համերաշխ, ներդաշնակ և յարատև յառաջադիմել քաղաքակրթութեան մէջ...

Վերոյիշեալ սկզբունքներու վրայ հիմնուած մեր պատասխանը չի կարող լինել միանգամայն բացասական։

Կրոնները չեն կրնար այնքան ճակատագրական կերպով ներգործել իրական կեանքին եղելութիւններու վրայ։ Անոնք ամենազօր չեն և ի վերջոյ փոփոխական են։ Անոնք կը կրեն ժամանակի և պայմաններու ազդեցութիւնը։ Եթէ մինչև անգամ անցեալին մէջ անոնց ներգործութիւնը վճռական եղած ըլլայ, ներկայիս մէջ և մանաւանդ ապագային մէջ անոնք չեն կրնար նոյն դերը կատարել։ Կեանքը խորունկ փոփոխութեան է ենթարկուեր. կրոնները չեն կրնար կեանքի անյետաձգելի պահանջներու դէմ յաւիտենապէս խուլ մնալ, յաւերժօրէն հակառակորդ հանդիսանալ։ Անոնք անհրաժեշտաբար պիտի բարեփոխուին։ Անոնք պիտի ըմբռնեն իրերու վիճակը և պիտի գիտակցին իրենց անզօրութիւնը՝ կեանքի, յառաջադիմութեան անիւը կանգնեցնելու և քաղաքակրթութեան ընթացքը փոխելու նկատմամբ։ Եթէ օսմանեան երկրի գոյութեան խնդիրը անհրաժեշտօրէն պահանջէ այս կամ այն կրօնական տրամադրութեան, այս կամ այն կրօնական աւանդութեան զոհաբերութիւնը—մահմեդական վարդապետութիւնը չի կրնար ընդդիմանալ իրականութեան անխուսափելի հրամայականին։ Անիկա պիտի բնաշրջուի։ Անիկա պիտի նորանայ ժամանակի և միջավայրի հետ միասին։ Այսպէս է եղած անցեալին մէջ։ Օսմանեան պատմութիւնը ցոյց կուտայ, որ ամեն անգամ, երբ երկրի գերագոյն բարիքը պահանջած է կրօնական նախապաշարումներու և աւանդութեանց զիջումը—անոր պահանջը այսպէս թէ այնպէս կատարուած է։ Դաւանաբանական դիպուածագիտութիւնը—casuistique-ը և մահմեդական կրօնին ազատական մեկնաբանութիւնը նպաստած են, որ խնդիրը լուծուի յանուն կեանքի անհրաժեշտ ու անդիմադրելի առաջադրութեան։

Կրօնական արգելքը Թիւրքիոյ վերածնութեան ճանապարհի վրայ՝ պատմական և ընկերաբանական ծանրակշիռ ապացոյցներու հանդէպ կը կորցնէ իր տարամերժ բնոյթը և իր յամառ հոգեբանութիւնը։ Անիկա անզօր է պատմութեան վճռի, քաղաքակրթութեան խօսքի դիմաց։

Կրօնական-դաւանաբանական տարբերութիւնները չեն միայն, անցեալին մէջ, Թիւրքիոյ ժողովուրդներու բաղխումներն ու ընդհարումները վճռականապէս պայմանաւորած։ Մահմեդական ազգերու և պետութիւններու մէջ հնարաւոր է եղած միջին դարերու բաւական ճոխ քաղաքակրթութիւնը։ Կրօնական վարդապետութիւնները անզօր են կեանքի և յառաջադիմութեան բովանդակ օրէնքները վարելու՝ իրենք ենթակայ ըլլալով յաւիտենական բնաշրջումին...

Այսպէս է իրականութեան և պատմութեան տրամաբանութիւնը. հետևաբար մահմեդական կրօնը իբրև կրօն, իբրև վարդապետութիւն, ինքն ըստ ինքեան չի կրնար նոր-Թիւրքիոյ վերածնութեան հանդէպ անան-

ցանելի խոչընդոտներ յարուցանել։ Օսմանեան երկրի յառաջադիմութիւնն ու քաղաքակրթութիւնը հնարաւոր է և մահմեդականութեան մէջ... պայմանով՝ որ իսլամ կղերը մնայ միշտ իր դաւանական սահմաններուն մէջ, առանց միջամտելու քաղաքական ու քաղաքացիական խնդիրներուն...

Օսմանեան պետութեան մէջ, ներկայ սահմանադրական օրերուն ևս, կառավարութեան և վարիչ կուսակցութեան ներսը կան մէկէ աւելի տարբեր, որոնք տակաւին չեն լքեր Թիւրքիոյ տխուր ու անպատիւ ժառանգութիւնը և որոնք ամեն կերպ կաշխատեն շահագործել մահմեդական կրօնը յանուն իրենց անձնական, դասակարգային շահերուն։ Անոնց նախնիքները երկար դարեր գործադրեր են այդ ստոր քաղաքականութիւնը, իրենց բոլոր հարստահարութիւնները, բարոյական և նիւթական ճնշումները Մահմեդի վարդապետութեան պարանոցին փաթաթելով։ Համիդեան երկարատև ու վատահամբաւ ռէժիմի ժամանակ այդ անխիղճ շահագործումը աններելի չափերու հասաւ։ Մահմեդականութեան անունով ամբողջ նահանգներ բնաջինջ ըրին, ժողովուրդներ մորթոտեցին, երկիրներ դատարկեցին և պէտք է ասել, որ այդ վատթար քաղաքականութիւնը դժուար թէ արդարանար Մահմեդի հիմնած ու քարոզած վարդապետութեամբ։ Պետութեան վարիչները և տիրող դասակարգերը, իրենց շահերու համար, անիրաւաբար առաջ քաշեցին այդ ուսմունքը և անոր վրայ դրին իրենց բոլոր ոճիրները։

Նոր Թիւրքիոյ մէջ այս անպատիւ խաղերը պէտք է որ վերանան ընդմիշտ։ Ամեն անգամ, ազատական բարեկարգութիւններու ժամանակ, քաղաքական-հասարակական զարգացման առիթով՝ մէջ բերել մահմեդական ուսմունքը և անոր անունով մարտնչել արդար ու ազգօգուտ կարգերու դէմ՝ կը նշանակէ կիրարկել հին Թիւրքիոյ դժբախտ քաղաքականութիւնը, կը նշանակէ խաբել ազգը, կը նշանակէ ամենավատ ծառայութիւն մատուցանել հայրենիքին։ Երիտասարդ Թիւրքերը պարտք ունին հսկելու ազատութեան, հաւասարութեան և քաղաքակրթութեան այդ վտանգաւոր թշնամիներուն վրայ։ Անոնք քաղաքացիական արիութիւն և հայրենասիրական իսկական ոգի պէտք է հանդէս դնեն՝ մարտնչելու ներքին հակառակորդներու դէմ, սահմանադրութիւնը, ազգութիւններու հաւասարութեան սկզբունքը, յառաջադիմութեան մաքուր դատը և նոր Թիւրքիոյ այնքան ցանկալի վերածնունդը իրականացնելու համար... Ապա թէ ոչ օսմանեան հայրենիքը երբէք չի նորոգուի, խաղաղութիւնը չի վերականգնի հոն, աշխատանքը ստեղծագործող չի դառնայ և բոլոր ժողովուրդները—թէ մահմեդական և թէ քրիստոնեայ—միշտ ստրուկ, միշտ անիրաւուած, միշտ հալածական կը մնան։ Որովհետև տիրապետող փոքրամասնութեան յաջողութիւնը—թէկուզ այդ փոքրամասնութիւնը մահմեդական ըլլայ— երբէք ըսել չէ իսլամ ժողովրդի բարօրութիւն, երբէք ըսել չէ ընդհանուր հայրենիքի և բովանդակ պետութեան բարգաւաճում։ Եթէ Երիտասարդ Թիւրքերը նպատակ ունին մէկ քանի անձերու և տիրապետող փոքրամասնութեան ողորմելի շահերու համար ամբողջ երկիրը, ամբողջ օսմանեան պետութիւնը կործանել—այն ժամանակ միայն կրնան արձագանք տալ անոնց քաղաքականութեան, այն ժամանակ կրնան մէջտեղ քշել մահմեդականութեան ուրուականը, անոր մէջ խեղդելու համար ազգին ապագան... Նոր պետութիւնները չեն կրնայ կրօնով ապրել։ Այսօրուան պայմաններուն մէջ, մեր քաղաքակրթական, յառաջադէմ դարուն անոնք, ով կրօնական մտահոգութիւններով կ'առաջնորդուին՝ միշտ պարտուող կը հանդիսանան գոյութեան անողոք կռիւին մէջ։ Պետութիւնը, ժամանակակից լուսաւորեալ պետութիւնը չի կրնար առաջադիմել, չի կրնար շարժուիլ միջնադարեան խնդիրներու ցանցին մէջ։ Այսօրուան երկիրները իրական, կենսական ուժերու պէտք ունին։

Նոր Թիւրքիան իր գոյութեան առաջնակարգ հարցը, իր վերածնութեան հիմնական պրոբլեմը չպէտք է թաղէ, չպէտք է խճճէ կրօնական վէճերու, կրօնական երազանքներու մէջ. ժամանակը կ'անցնի, միւս ազգերը կը զարգանան, կը յառաջադիմեն և մեզ յետ կը թողուն։ Կամ պէտք է քալել մեր միջավայրին, մեր շրջապատի պայմաններուն հետ միասին և կամ պէտք է հեռանալ պատմական ասպարիզէն։

Երիտասարդ Թիւրքերը պէտք է հասկնան, որ կրօնը այլ ևս անհատական զգացմունքի, անձնական գերադասութեան խնդիր է։ Պետութիւնը պէտք է բաժանել կրօնէն, պետութիւնը պէտք է ազատագրել անոր տիրապետութենէն։ Այսուհետև կրօնաւորները կրօնամոլները չէ, որ պէտք է պատրաստէ սահմանադրական Թիւրքիան։ Այսուհետև առաջադէմ, լուսաւորեալ, հայրենասէր քաղաքացիներու պէտք ունինք մենք։

Աշխարհիկ դպրոցներու, գրականութեան, ազնիւ ու անկաշառ մամուլի, մատենադարաններու միջոցով և բազմաթիւ այլ գործոններու կիրառութեամբ հնարաւոր կ'ըլլայ նոր Թիւրքիոյ համար լուսաւոր ու երջանիկ ապագայ մը պատրաստել։

Այդ ապագային մէջ կրօնական պրոբլեմը, որ Թիւրքիոյ մեծագոյն ցաւն է եղած՝ կը լուծուի առանց փոթորիկներու, առանց դժուարութեան, միանգամայն բնական կերպով։

Նոր Թիւրքիոյ այն վարիչները, որոնք երբեմն Օգիւստ Կոնտի դրական փիլիսոփայութեան անունով են հրապարակ ելած՝ իրենց համոզումները հո՛ս պէտք է շարժման մէջ դնեն։ Կրօնական այն մառախուղը—որ մինչև օրս ալ կը ծանրանայ Թիւրքիոյ ժողովուրդներու հոգեբանութեան վրայ—այդ դրական փիլիսոփայութեան աջակցութեամբ և անոր բարոյական զինակցութեամբ կարելի կը դառնայ ցրել։

Մեր աշխարհը պէտք ունի պայծառ ու լուսաւոր հոգիներու, մեր պետութիւնը պէտք ունի աննախապաշար ու կրօնին կաշկանդումներէն ազատագրուած մտքերու։

Երբ որ Երիտասարդ Թիւրքերն անկեղծօրէն ու համոզմունքով աշխատին յանուն այդ գաղափարներու, այնուհետև արդէն դիւրութեամբ կը լուծուի կրօնական պրոբլեմը։ Նոր Թիւրքիան հետզհետէ կը մօտենայ այն վիճակին, ուր այլ ևս կրօնը կը դադրի հարստահարութեան ու տիրապետութեան գործիք ըլլալէ և ուր կրօնական վէճը կը ներկայանայ իբրև ցաւագին անցեալի տխուր յիշողութիւն...

---

# ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՄԵՆՔ

Ժառանգական յաւակնութիւններ. — Իտալիան եւ Միջերկրականը. — Պատերազմի դրդիչ պատճառները. — Ներքին թշառութիւն եւ արտագաղթ.—Բուրժուա-աւատական փտախտը.—Դաղութային խաղամակնութիւնը եւ անցեալ ձախողութիւնները. — Դիւրին յաղթանակի պատրանքը.—Իտալական զազանութիւններ.—Բուրժուազական լիբերալիզմը 19-րդ դարում եւ այժմ. — Սոցիալիզմը՝ ժառանգ լիբերալիզմի. — Բողոքի միտինգներ. —

Հիւսիսային Աֆրիկայի այդ ահագին տարածութիւնները—Տրիպոլիսն էլ միասին—կազմում էին մի ժամանակ հռոմէական աշխարհածաւալ կայսրութեան նահանգները։ Իտալիան, լինելով կամ ինքզինքը համարելով իբրև ժառանգ-շարունակող այդ պանծալի տիրապետութեան, ցոյց է տուել մինչև օրս, բնականաբար, խիստ յաւակնոտ և պահանջկոտ տրամադրութիւն միջազգային արեւպագում՝ այդ լայնարձակ ու վայրենաբնակ հողերի վերաբերմամբ։ Իբրև „միջերկրական“ պետութիւն՝ նա ձգտում էր Անգլիայի ու Ֆրանսիայի հետ համահաւասար դիրք ունենալ հինաւուրց քաղաքակրթութեան այդ հսկայ աւազանի մէջ. աւելի ևս. նա գտնում էր, որ ինքն աւելի իրաւունք ունի Միջերկրականի տիրապետութեան վրայ... Բայց իրօք ոչինչ չունի, Տունիսը սահեց ձեռքից, Մնացածը՝ նոյնպէս բաժնուած Անգլիայի ու Ֆրանսիայի մէջ. և Ապենինեան պետութիւնը—Հռոմի հարազատ ժառանգը — չունի մի կայան այդ ծովի վրայ, ուր կարողանար տնկել իր ազգային դրօշը։

Ահաւասիկ էական, դրդիչ պատճառները իտալական արշաւանքի և նորանոր աշխարհակալութեան փորձերի։

Արդարացում չէ, ի հարկէ, պատճառների ու շարժառիթների յիշատակութիւնը։ Յափշտակութիւնը մնում է յափշտակութիւն։ Իսկ այն պայմանները, որոնց մէջ կատարուեց այդ անակնկալ արշաւը, դարձնում են այն՝ առանձնապէս հակակրելի և դատապարտելի։

Իտալական կառավարութիւնը և իշխող դասակարդերը, որ իսկական յօրինողն են այդ մարդասպան ծրագրի, պատճառն են բերում, անշուշտ, երկրի անոյշ աղքատութիւնը, ազգաբնակութեան յարաճուն վերելքը, գաղթի հսկայական ծաւալումը և այլն։ Իրաւ է... Բայց ինչո՞ւ... Ինչո՞ւ են միլիոնաւոր իտալացիներ—գլխաւորապէս հարաւային Իտալիայից—թողել իրենց ծննդավայրը և գաղթել դէպի հեռաւոր Արգենտինա և ուրիշ վայրեր։ Ինչո՞ւ են հազարաւորները ամեն ամիս, ամեն շաբաթ դուրս չուում նոյն հայրենիքից դէպի Եւրոպայի և աշխարհի բոլոր ծայրերը...

Ոչ այն պատճառով, որ երկիրը աղքատ է իր բնական բերքերով, որ արդիւնաբերութիւնն ու աշխատանքը չեն կարող բարգաւաճել, որ յարաճուն ազգաբնակութիւնը չի կարող մնունդ առնել իր հայրենի միջավայրում... Իտալիան աղքատացնողը նոյն այդ իշխող դասակարգերն են, նոյն այդ կեղեքիչ ու գիշատիչ կառավարութիւնն է, որ անհամար ու ջախջախիչ տուրքերով ծանրացած է աշխատաւոր ազգաբնակութեան խաւերի վրայ... Իտալիայի ուժասպառման պատճառն այն է, որ արգաւանդ, լայնածաւալ հողերը, ի տեղի գտնուելու աշխատաւոր ժողովրդի ձեռքում, կազմում են բացարձակ սեփականութիւն մի բուռն վայելողների, մի բուռն խոշոր կալուածատէր դասակարգի, որ շահագործում է անողորմ կերպով իր ստորադրեալ պրոլետարական զանգուածները... Եւ ահա այդ բազմապիսի գիշատիչների ճիրաններից ազատուելու համար է, որ իտալական չարքաշ, թալանուած մասսաները առնում են պանդխտութեան ցուպը և դիմում դէպի բոլոր հօրիզոնները, ուր ապրուստը աւելի թեթև է և վաստակը աւելի առատ։ Իտալիան կործանողը սեփականատիրական, ֆէոդալ-կապիտալիստական այդ ոճրագործ սիստեմն է և դեռ այսօր պահպանում է իր հրատապ այժմէութիւնը Պլինիուսի հինաւուրց ու ծանօթ բացականչութիւնը. „*Latifundiae perdidere Italiam!*“... (խոշոր հողատիրութեան սիստեմը կործանեց Իտալիան)։ Խօսքը հին Իտալիայի մասին է, բայց նա միանգամայն ճիշտ է և նորի վերաբերմամբ։

***

Նոյն ֆէոդալ-կապիտալիստական ուժերն են, որ — միշտ տարուած նորանոր նուաճումների տենչանքով — Նիւթեցին Տրիպոլիսեան պատերազմը։ Բաւական չէ իր ունեցածը, բաւական չեն ներսի սանձարձակ շահագործումներն ու հարստութեան լեռները — պէտք է դուրսն էլ ծաւալուել, պէտք է ստեղծել աւելի մեծ Իտալիա, պէտք է մղել ուրիշ խոշոր ուժերի հետ, կազմակերպել գաղութային քաղաքականութիւն և իր բաժին մասնակցութիւնն ունենալ համաշխարհային շուկայի մէջ։

Մինչև օրս գաղութային քաղաքականութեան ապարէզում Իտալիան չարաչար ձախորդութիւններ է միայն կրել։ Հաբէշստանի հետ ունեցած պատերազմը (1896-ին) վերջացաւ ամօթալի պարտութեամբ — Ադուայի նշանաւոր ճակատամարտում — երբ իտալական բանակը ջախջախուած յետ նահանջեց և Իտալիան հրաժարուեց առժամապէս իր նուաճողական յաւակնութիւններից Աֆրիկայի այդ մասում։

Այժմ ահա Կրիսպիի արժանաւոր յետնորդները որոշեցին սրբել իրենց ճակատից այդ ծանր անարգանքը, լուծել հաբէշների վրէժը թիւրքերից և փայլուն յաղթանակով ծառանալ աշխարհի առաջ, իբրև հզօր, ծանրակշիռ քաղաքական մի մեծութիւն։ Այնքա՞ն նրանց դիւրին էր թւում այդ յաղթանակը։ Չինաւորական մի զբօսանք՝ դէպի Տրիպոլիս, մի անարիւն ընդհարում և յաղթութիւն...

Այդպէս չ'եղաւ, սակայն։ Մէկէն ի մէկ արաբները ներսից, միացած թիւրքական բանակի չնչին բեկորների հետ, գրոհ տուին պաշարողների դէմ և խաղացուեց, ի տես աշխարհի, մի ահագին և արիւնոտ ճակատամարտ, խիստ ծանր կորուստներով երկուստեք։ Իտալիան շտապեց պաշտօնապէս հռչակելու Տրիպոլիսի միացումը, սակայն մինչև կատարեալ նուաճումը—հեռու է դեռ։ Եթէ արաբները շարունակեն ըմբոստանալ նոյն մոլեռանդ կատաղութեամբ, եթէ թիւրքաց գաղտնի և յայտնի առաքեալներին, քարոզիչներին աջողուի սիրաշահել իրենց կրօնակիցներին, վառել նրանց իսլամական զգացումները և տրամադրել ընդդէմ „գիավուր“ արշաւողի—պատերազմը կարող է շատ երկար տևել և ներսում կը բորբոքուին հաւանականօրէն պարտիզանական կռիւները, որոնք չեն թոյլ տայ իտալական բանակին թափանցել երկրի խորքը և հաստատել այդ երկրում իրական տիրապետութիւն։

Ահա մի հանգամանք, որ ծանրապէս մտատանջում է ոչ միայն Իտալիային, այլ և ամբողջ Եւրոպային, այլ և մեզ, Թիւրքիոյ ժողովուրդներիս... Որովհետև, քանի աւելի շարունակւի պատերազմի մղձաւանջը, այնքան աւելի պիտի աճին միջազգային բարդութիւնների շանսերը, այնքան աւելի պիտի խաւսվի և մեր ներքին կացութիւնը, ուր ամեն տեսակ մութ ուժեր շարունակ գործի վրայ են և դաւում են Սահմանադրութեան դէմ։

Վերջիվերջոյ Իտալիան թերևս ստիպուած լինի ընդլայնելու պատերազմի կրկէսը... Մինչև թիւրքական ջրերը... Մի բան, որ կարող է շատ ծանր անակնկալների աղբիւր լինել, որ կարող է բորբոքել հսկայական մի հրդեհ...

***

Ճի՞շտ են արդեօք տարածուած լուրերը այն հսկայական սարսափների ու դազանութիւնների մասին, որ իբր թէ գործ են դրել Մաձէնիի և Գարիբալդիի հայրենակիցները անպաշտպան արաբների վրայ, կանանց, ծերերի, երեխաների...

Թւում է թէ մասամբ ճիշտ են։ Իտալացիք եռանդով բողոքում են և նրանց հեղինակաւոր դէմքերից մինը, Գուլիելմո Ֆերրերօ մինչև իսկ կատաղօրէն ամբաստանում է Անգլիայի հասարակական կարծիքը, որ հաւատում է և քաջալերում այդ սոսկալի լուրերի տարածումը։ Սակայն չէզոք ու բազմաթիւ թղթակիցների ջանքերով ետ քաշուեց մասամբ Տրիպոլիսեան թատերաբեմի վարագոյրը և Եւրոպան տեսաւ մի քանիսը իտալական բանակի տխուր սխրագործութիւններից։

Եւ ի՞նչ զարմանք։ Մի՞թէ՞ նոյնը չ'արեց Մեծ Բրիտանիայի կառավարութիւնը Տրանսվալի մէջ։ Մի՞թէ՞ աւելի մարդասէր են ֆրանսիական և ուրիշ զօրքերը և կառավա-

բութիւնները։ Տարբերութիւնը յամենայն դէպս շատ էլ մեծ չէ։

Ժամանակակից բուրժուազիայի դիշատիչ ախորժակները չեն ճանաչում դիմութեան, մարդասիրութեան զգացումներ։ Նրանք հալւում են փառաւորապէս նւաճումի ու աշխարհակալութեան անդիմադրելի տենչանքների մէջ։ Վաղը մօտաւորապէս նոյնը կ'անէ Ֆրանսիան Մարոկկոյում, Անգլիան—Հնդկաստանում ու Եգիպտոսում։

Ո՞ւր է վաղեմի մարդասէր լիբերալիզմը... Նա շոգիացել է, աստիճանաբար խեղաթիւրւել է և այլասերւել։ Բուրժուազական լիբերալիզմը—ազատական հոսանքը—յայտնի է, ծայր տւեց 18-րդ դարավերջում, Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան մրրկածուփ աւազանում։ Եւ ի՞նչ էր քարոզում նա, ինչպէ՞ս էր նա վարում պատերազմը... Չէ՞, Ֆրանսիական առաջին հանրապետութիւնն ևս մղել է պատերազմներ—և որքա՜ն բազմաթիւ, արկածալի, արիւնահեղ... ընդդէմ ամբողջ յետախաղաց, բռնապետական Եւրոպայի։ Ինչպէ՞ս էին սակայն ըմբռնում Դանտօնները այդ պատերազմի պրօբլեմը, նրա նպատակը, առաքելութիւնը։ „Ազգային Դաշնաժողովը" (Convention) 1792 թ. 15 դեկտ. հռչակաւոր հրովարտակի մէջ, ուղղւած հանրապետական բանակի հրամանատարին, ասում էր. „Դուք, զօրավարնե՛ր, պարտաւոր էք նւաճելիք երկրների մէջ, յանուն Ֆրանսիական ազգի, հռչակել ժողովրդական վերապետութիւն, բոլոր բռնութիւնների վերացում, բոլոր կաստերի, առանձնաշնորհումների ջնջումն. դուք պարտաւոր էք տանել այդ ժողովուրդներին՝ խաղաղութիւն, օգնութիւն, եղբայրական սէր, ազատութիւն և հաւասարութիւն"...

Այդպէս էր պատգամում 18-րդ դարու լիբերալ, ազատամիտ բուրժուազիան, ի դէմս իր լաւագոյն զաւակների։ Այսօ՞ր... Նոյն բուրժուազիայի այլասերւած յետնորդները գրոհ են տալիս, որպէս Ատիլայի հօրդաները, նոր, „կուսական" երկիրների վրայ... միմիայն թալանելու և ծծելու համար։ Այդ բաւական չէ, դեռ հրապարակ է նետւում մարդ-գազանը և նիւթւում են տարդի նախճիրներ...

Վաղեմի բուրժուազիան մարտնչում էր յանուն „մարդկային իրաւունքների", յանուն արդարութեան և տիեզերական հաւասարութեան։ Այսօրւանը մարտնչում է լոկ յանուն իր գրպանի, իր տնտեսական, առևտրական շահերի ու առանձնաշնորհումների։

Ահա թէ ինչպէս է խեղաթիւրւել լիբերալիզմի երբեմն մեծ, փառապանծ հաւատամքը։ Ահա թէ ինչու մենք ասում ենք իրաւամբ, որ հայաեւրոպական լիբերալիզմը սնանկացել է բարոյապէս և յանձնել իր վաղեմի առաքինութիւնների պաշտպանութիւնը՝ սոցիալիզմին, ընկերվարութեան։

***

Սոցիալիստական կուսակցութիւններն ու բանակները ամենաանկեղծ և ամենաազդու բողոքողն են ներկայ թիւրք-իտալական պատերազմի դէմ, ինչպէս եղել են բոլոր ուրիշ պատերազմների դէմ։ Բրիւսսէլի Միջազգային Սոց. Բիւրօի թելադրութեամբ բոլոր երկրներում կազմակերպւեցին բողքի հսկայ միտինգներ։ Նման միտինգ տեղի ունեցաւ Սալոնիկում։ Թիւրք, բուլգար, հայ ու այլ ցեղերի ռամկավարական տարրերը ըմբոստացան Իտալիայի այդ փոքրոգի և անիրաւ յարձակման դէմ և համերաշխութեան հեռագիրներ ուղղւեցին իտալական սոցիալիստներին։ Նոյնպիսի մի հեռագիր ուղղեց հռօմ — պատերազմի յայտարարութեան հետևեալ օրը—Հ. Յ. Դաշնակցութեան Արևմտեան Բիւրոն։ Նա գրեց և Բրիւսսէլ, Միջազգ. Սոց. Բիւրօին։ Նա միաժամանակ յատուկ շրջաբերականով յորդորեց դաւառական մարմիններին արթուն մնալ և հսկել հանրային խաղաղութեան վրայ...

Ամենաբազմամարդ և միջազգային միտինգներից մինը տեղի ունեցաւ Աւստրիայի մայրաքաղաքում (նոյեմբ. 16-ին), մասնակցութեամբ աւստրիական պարլամենտի փոխ-նախագահ, սոցիալիստ Պերներստորֆերի, համբաւաւոր լեհ սոցիալիստ-հռետոր Դաշինսկու, իտալացի պատգամաւոր Օլիվայի և Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցչի, որ մասնակցեց իբրև անդամ Միջազգային Սոցիալիստական Բիւրօի (Թիւրքիոյ հատւածի կողմից)։

„Քիչ ենք ունեցել Վիեննայի մէջ այս տեսակ առիթներ—այսպէս սկսեց Դաշինսկի—ուր քով քովի, աշխատաւորական մի ժողովի ամբիօնից եղբայրաբար, համերաշխ խօսեն երկու պատերազմող պետութիւնների ներկայացուցիչները և նոյն լուծման եղանակը ազդարարեն աշխարհին։ Այն հանգամանքը՝ որ մի իտալացի և մի հայ յեղափոխական, երկուսն էլ կրող միջազգային ժողովրդական գաղափարի, եկան այստեղ, պրօլետարական բանակի մէջ, իրարու ձեռք սեղմեցին, որպէս բարեկամներ, եղբայրներ,—այդ իրողութիւնը ըստ արժանւոյն կը գնահատւի ամբողջ Ինտերնացիօնալի մէջ (երկարատև ծափեր)։

Ապա հռչակաւոր լեհ սոցիալիստը մի թռուցիկ ակնարկ է նետում ամբողջ նորագոյն կապիտալիստական աշխարհի վրայ և ենթարկում է ժամանակակից հասարակակարգը խորունկ վերլուծման։

„Թիւրք-իտալական ընդհարումը միայն մի հատւած է կապիտալիստական զարգացման պատմութեան մէջ։ Մինչդեռ մենք աւստրիական ժողովուրդներս խարխափում ենք մարմուր վէճերի մէջ, անդին Ասիայում՝ հսկայական Չինաստանի մէջ որոտում է Յեղափոխութիւնը։ Հայ պատգամաւորը, որ այսօր խօսում է այստեղ—նա առաջին ծիծեռնակն է, որ գալիս է աւետելու մեզ՝ արթնցող Ասիայի գարունը...

„Չորս հարիւր միլիօն ազգաբնակութիւնը, գրեթէ նոյնքան, որքան ամբողջ Եւրոպան, թօթափում է միահեծան բռնակալութեան լուծը, թօթափում է դրա հետ միասին և եւրոպական կապիտալիզմի լուծը... Բոլոր այդ խոպան, ասիական երկիրները, որ մինչև օրս կթան կովեր են եղել կապիտալիստական Եւրոպայի համար, որ եղել են մինչև օրս շուկաներ ու շահաստաներ, այսուհետև, յեղափոխւելով ու ազատւելով, պիտի զարգացնեն հետզհետէ իրենց սեփական արդիւնաբերութիւնը, փոխ առնելով արևմտեան քաղաքակրթութեան արդասիքները, պիտի շահագործեն սեփական ուժերով իրենց անբաւ հարստութիւնները և դրանով իսկ պիտի պատրաստեն եւրոպական կապիտալիզմի կրախը, տագնապը, պիտի պատրաստեն մեծ, վերջնական պատերազմը—Սոցիալական յեղափոխութիւնը (բուռն ծափահար.)։

„Մեր հայ ընկերը ակնարկեց, որ երիտասարդ, նոր ազատագրւած Թիւրքիայի վրայ յարձակւողը՝ մի պետութիւն է, որ ունեցել է Risorgimento-ի դիւցազներդութիւնը, որ ինքը դեռ նոր մղել է ազատագրական իր պատերազմը։ Արդարև. ընդամենը մի քանի տասնեակ տարի է անցել այն օրերից, երբ ինքն Իտալիան քարշ էր գալիս աւստրիական լծի ու սարսափների տակ... Մի երկիր, որի աշխատաւոր ազգաբնակութեան վիճակը, նրա թշւառութիւնը ուղղակի գարշելի է, տգէտների, անգրագէտների թիւը՝ հսկայական, գաղթականութեան շարժումը՝ համատարած,—այդ երկիրը այժմ գնում է Տրիպոլիս, այժմ նա նետւում է իր դրացու կոկորդին, շղթայում է նրան (բուռն ցասում. աւազակնե՛ր, մարդասպաննե՛ր)... Այդ երկիրն է, որ այժմ կազմակերպում է աւազակային արշաւանք, բոլոր տարդի հալածանքներով ու գազանութիւններով։ Եթէ անգամ մի մասնիկը ստոյգ է այդ գազանութիւնների պատմութեան մէջ — այդ բաւական է մեզ վրդովեցնելու համար...

„Եւ պապը Վատիկանից օրհնում է այդ աւարառու բանակը, այդ մարդասպան զէնքերը (երկարատև ցասման աղաղակներ. Pfui!)... Սակայն, մեր կողմից անարդարութիւն կը լինի կարդալ այս ամբաստանութիւնը միմիայն պաշտօնական Իտալիային։ Չը կայ մի հատիկ քաղաքակիրթ ազգ, որի պատմութիւնը անարգւած չը լինի այդպիսի տարդի սխրագործութիւններով՝։

Եւ մէկ առ մէկ հանդէս է բերում Դաշինսկի Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի ու այլ պետութիւնների գաղութային քաղաքականութեան ոճիրները, եզրակացնում է—բուռն, երկարատև ծափերի մէջ— որ միմիայն

պրոլետարական վերջին վճռական Յեղափոխութիւնը վախճան կը դնէ համաշխարհային կապիտալիզմի այլանդակութիւններին։

Ճառի տպաւորութիւնը ահագին էր. խօսողը աւստրիական պարլամենտի ամենափայլուն հռետորներից է, եթէ ոչ ամենափայլուն։

Ահա և Պերներստորֆերը ամբիոնի վրայ—նոյն աւստրիական պարլամենտի սոցիալիստ փոխ-նախագահը և կուսակցութեան հեղինակաւոր պարագլուխներից մինը։ Ահագին ժողովուրդը նրան եւ դիմաւորում է ջերմ, երկարատև ծափերով։

Պերներստորֆեր սկսում է իր ճառը՝ ժամանակակից միլիտարիզմի (զինուորական սիստեմի) վերլուծութեամբ.

„Աշխարհը տակից ցցլուխ սպառազինուած է և ամենուրեք իշխող գաղափարդերն ու արքայատոհմերը շարունակում են զինաւորումը, չնայած ժողովրդային զանգուածների խորունկ թշուառութեան... Երկրագնդի նորանոր մասեր պէտք է նուաճուին և դառնան շահագործման նիւթ եւրոպական ընչաքաղց կապիտալիզմի համար։

„Մենք եւ գաղութային պետութիւն ենք... Սակայն նախ քան ազգերին քաղաքականապէս նուաճելը, պէտք է նուաճենք նրանց՝ բարոյապէս։ Մենք միայրինք և Բօնիա-Հերսեքը... կարծես քիչ ազգութիւն ունէինք մեր կայսրութեան մէջ (ընդհանուր ծիծաղ)... Քառակուսի մղոնների թիւը չէ, որ պէտք է լինի մեզի իդեալ, մենք պէտք է մեծ լինինք ոչ թէ տարածութեամբ, այլ քաղաքակրթութեամբ։ Մեր նպատակը պէտք է լինի, որ ազգերը քովքովի ապրեն հաշտ ու համերաշխ։ Մէկ միլիոնի չափ իտալացիներ կան Աւստրիայի մէջ, այնքա՞ն դժգոհ աւստրիական ռէժիմից։ Ինչո՞ւ... Ապա մի հարցրէք զէիցերիացի իտալացիներին՝ ո՞ր պետութեան հպատակ կուզեն լինել—զէիցերակա՞ն թէ իտալական...

„Մեծ պետութիւնների—Անգլիոյ, Գերմանիոյ և Ֆրանսիայի աշխարհային պատճառը մասամբ տեղական արդիւնաբերութեան յարաճուն սլացքն է։ Մենք սոցիալիստներս բնաւ չենք անիծում ճարտարարուեստի առաջխաղացութիւնը, մենք ողջունում ենք տնտեսական զարգացումը ամենուրեք, և հակառակ ենք մեր աւտարիական քաղաքականութեան, որ ըստ ամենայնի — հովանաւորող մաքսերով եւ այլն — կաշկանդում է արդիւնաբերութեան թռիչքը, տրամաբանելով այսպէս.

„Շատ արդիւնաբերութիւն—ասել է՝ շատ գործաւորներ, շատ գործաւորներ—ասել է շատ ընկերվարականներ (քրքիջ)։

„Մեր, սոցիալիստներիս, բողոքը պատերազմների դէմ պատճառաբանւում է երկու կարգի նկատումներով. նիւթական և բարոյական։ Մենք չենք ուզում տնտեսապէս աւերուել և մենք գարշում ենք այդ ժողովրդասպան, արիւնոտ նախճիրներից... Մեր ուզածը մէկ պատերազմ է միայն — ընդդէմ բոլոր վատերի, դեհեգինների, գիշատիչների (փոթորկոտ ծափեր)։ Իշխողների համար աշխատաւոր ժողովուրդը լոկ միջոց է իրենց բարեկեցութիւնը ապահովելու։ Իսկ մեզ համար՝ այդ ժողովուրդը ինքնանպատակ է (Selbstzweck)... Պատերազմները տանում են ազգերին դէպի բարբարոսութիւն... Ահա թէ ինչու մենք նշաւակում ենք նրանց. կեցցէ՛ ազատութիւնը և կեցցէ՛ Ինտերնացիոնալը“ (բուռն ծափեր)։

Հ. Ց. Դաշնակցութեան ներկայացուցիչը, ողջունելով ժողովը իր կուսակցութեան անունից, ասաց — հանդիսականների համակրական ցոյցերի մէջ—հետևեալը.

„Շնորհակալութիւն այդ ջերմ ընդունելութեան և այդ ոգևորած ծափերի համար, որ ուղղուած են Երիտասարդ, Սահմանադրական Թիւրքիային։ Երկարատև ու դժուարին կռիւներից յետոյ էր, որ այդ երկրի յեղափոխականները նուաճեցին, վերջապէս, ամենատարրական մարդկային իրաւունքները—և այդ իսկ պատճառով, այս վայրկեանիս Իտալիայի մեր դէմ՝ յարուցած պատերազմը թունում է առանձնապէս հակակրելի։ Նա կրկնակի ոճիր է, քանի որ ուղղուած է մի պետութեան դէմ, որ հազիւ հազ ազատագրուած մի զարհուրելի բռնակալութեան ճիրաններից, գտնւում է դեռ իր պարլամենտական զարգացման արշալոյսին և ձգտումների վերակազմելու, նոր, արևմտեան կաղապարով։ Այլ բան էր հին համիդեան Թիւրքիայում։ Այն ժամանակ երկրի անդամահատումը հմաբւում էր գրաւակա՛ն կեանքի, առաջադիմութեան ու քաղաքակրթութեան... Որովհետև հին Թիւրքիան մի վիթխարի դիակ էր, ծոյլ, անկենդան մի օրգանիզմ, նա պատմական „հիւանդ մարդն“ էր։ Բայց այսօր նա վերածւած է սահմանադրական պետութեան։

„Հեռու եմ երիտասարդ-Թիւրքերի ռէժիմը ներբողելու և նոյնիսկ պաշտպանելու յանկութիւնից։ Երեք տարուց ի վեր ոչինչ չի արած, գրեթէ ոչինչ՝ մահմեդականութեան և քրիստոնեայ ազգաբնակութեան միջև եղած խոր անդունդը վերացնելու, ազգայնական հակամարտութիւնը մեղմելու համար... Թիւրքիան մնում է իբրև մի տեսակ երկրորդ Աւստրիա (ընդհանուր ու բուռն ծիծաղ) — ներեցէք ինձ աւստրիացի քաղաքացիներ, իմ՝ այս համեմատութիւնը, որ փոքր ինչ վերաւորական կարող է լինել ձեր արժանապատուութեան համար—Թիւրքիան ազգայնական կատաղի պայքարների թատր է և այդ մտքով նա մի երկրորդ Աւստրիա է,—բայց մի Աւստրիա, որ չունի, տարաբախտաբար, ոչ ձեր երկրի ազգութիւնների մշակութական նուաճումները (Kulturerrungenschaften) և ոչ էլ ձեր մեծ, միջազգայնօրէն ու ֆէդերատիվ կազմակերպուած ընկերվարական կուսակցութիւնը, որը չը նայած իր ներքին գժտութիւններին մի ահագին, ծանրակշիռ ազդակ է այս երկրի մէջ և մի յայտնի չափով ընդունակ է մեղմելու ազգայնական հակամարտութիւնները (ջերմ հաւանութեան շեշտեր)։

„Եթէ ես այստեղ չեմ եկած պաշտպանելու նոր Թիւրքիոյ ռէժիմը, ապա միւս կողմից մոռանալու չենք, որ տակաւին սիրիզն է սահմանադրական կեանքի, մոռանալու չենք և այն՝ որ այդ սահմանադրութեան դէմ մշանջենապէս դաւում են մահմեդական ահագին, մղեռանդ ու յետադէմ զանգուածները, որոնք սպասում են մի բարեպատեհ առիթի համիդական բռնապետութիւնը վերականգնելու համար (ցասման աղաղակներ)։ Իւրաքանչիւր մի պատերազմ, արտաքին մի տագնապ նշանակում է Թիւրքիոյ համար ներքին խորունկ ճգնաժամ (ջերմ հաւանութիւն)... Ահա թէ ինչու մենք սոցիալիստներս և ամբողջ օսմանեան ռամկավարութիւնը այսօր երկիւղով ու տարակուսանքով ենք նայում ապագային,—մի ապագայ, որ կարող է վերստին բերել մեզ հակայեղափոխութեան պղտոր յորձանքը իր բոլոր արիւնոտ երևոյթներով...

„Այդպիսով, դուցէ դարձեալ մի անգամ եւրոպական գիշատիչ կապիտալիզմը պիտի սպանէ սաղմի մէջ մի ազատական գաղափար։ Եւ ամենից քիչ մենք կրապաստէինք այդպիսի մի եղեռնափորձ, այդպիսի մի գիշատիչ արշաւանք Իտալիայից, Risorgimento-ի *) պանծալի հայրենիքից։

Ապա „Դաշնակցութեան“ պատգամաւորը խօսեց պատերազմի ծաւալման հաւանականութեան մասին, Drang nach Osten-ի և աւստրո-գերմանական ախորժակների մասին, նշաւակեց Վիլհելմ II-ի տաճկական քաղաքականութիւնը, ժողովի բուռն ցասման աղաղակների մէջ...

„Գերման կառավարութիւնը լքեց Թիւրքիան, ինչպէս որ 15 տարի որանից առաջ լքել էր Տրանսվալը... կայզերական քաջայերանքներ հեռագրով զրկելուց յետոյ (Pfui! Pfui!)։

„Քաղաքացիներ. մեկ կամ մի քանի հրապարակային միտինգներով մենք չենք կարող ոհմանափակուել։ Արևելեան խնդրի այդ շարունակական վտանգի և պետութեանց այդ յարատև դաւերի հանդէպ՝ պէտք է աշխատինք անխոնջ ու անդադրում։ Միմիայն միջազգային աշխատաւորութեան յաղթական ընթացքն է, որ կարող է զսպել միջազգային կապիտալիզմի անյագուրդ ախորժակները։ Միմիայն սոցիալիզմի կազմակերպուած, սիստեմատիկ գրոհն է, որ կարող է ապահովել համաշխարհային խաղաղութիւնը։ Բողոքեցէք և՛ միտինգների և՛ մամուլի մէջ և՛ պարլամենտում. միշտ աւելի և աւելի ուժեղ թող հնչէ սոցիալիստական մարտակոչը։

*) Իտալիոյի ազատագրական դիւցազնեանգութիւն։

— „Պատերազմի դէմ. կեցցէ՛ ժողովուրդների միջազգային համերաշխութիւնը՝։ (Երկարատև ծափահարութիւններ)։

Իտալացի սոցիալիստ Օլիվա, աւստրիական պարլամենտի անդամ, կարդաց մի հակիրճ յայտարարութիւն, որի համառօտ պարունակութիւնը հետևեալն է.

„Մեր ընկերների ճառերից յետոյ ինձ աւելորդ է առաջ բերել այն փաստերը, որոնցով մենք դատապարտում ենք միլիտարիզմը և իր զարհուրելի վերջնանպատակը՝ մեր սոցիալիստական տեսակէտից։ Ես խօսում եմ Աւստրիոյ իտալական սոց. կուսակցութեան կողմից, բայց վստահ եմ, որ նաև իտալական պետութեան պրոլետարիատի մեծամասնութիւնը բաժանում է մեր տեսակէտը։ Այսպէս խելառորէն յաւուցած պատերազմը կը ծառայի արքայատոհմի և կլերա-բուրժուական դասակարգերի շահերին, նրա նպատակն է խեղդել աշխատաւորութեան դասակարգային պայքարը հայրենասիրութեան, շովինիզմի գինովութեան մէջ։

„Այս վտանգաւոր վայրկեանում, երբ վերստին կարող է բորբոքուել կռիւը, մահմեդական և քրիստոնեայ ժողովուրդների միջև, որ արդէն այնքան զոհեր է պատճառել անցեալի մէջ—միակ հնարաւորութիւնը, ոճիրները կանխելու, արգելելու միակ միջոցն է՝ կազմակերպել միջազգայնօրէն և համերաշխօրէն բոլոր երկիրների աշխատաւորական բանակները, որոնք միայն և կարող են ազատել մեզ պատերազմների արհաւիրքներից։ Կեցցէ՛ աշխատաւորական միջազգային համերաշխութիւն։ (Ջերմ ծափահարութիւն)։

Ընդունուեց հանապատասխան ու միաձայն որոշում, - և Վիեննայի ահագին, բազմահազար աշխատաւորութիւնը ցրուեց, լի ատելութեամբ դէպի միլիտարիզմի ու պատերազմի հեղինակները...

***

Աւա՜ղ, լոկ միայն բարոյական արժէք ունին ներկայ ծանր վայրկեանների մէջ այս բոլոր միտինգներն ու որոշումները։ Կը դայ, սակայն, ժամանակ—և շատ էլ հեռու չէ նա—երբ յարձանքը ուռչելով, ծաւալուելով, կը զարնէ ազդուրէն, իր տեղին և կը հասնէ նպատակին։ Բայց անգամ իբրև լոկ բարոյական արժէք ունեցող ցոյցեր, դրանք ահագին կարևորութիւն ունին և ներկայումս, գործում են իրենց ազդեցութիւնը հեղինակաւոր շրջանների վրայ։ Ապացոյց՝ որ օսմանեան պարլամենտի նախագահը, Ահմեդ Բիզան, հարկ համարեց անձամբ դիմել Բրիւսէլի Միջազգային Ընկերվարական Բիւրոյին, խնդրելով, որ բողոքի միտինգներ կազմակերպեն ամենուրեք։ Սոցիալիզմի և աշխատաւորութեան դատի հակառակորդները գիտեն — նեղն ընկած վայրկեաններին—դիմումն անել նոյն սոցիալիզմի հեղինակաւոր հաստատութեան..

***

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, իբրև ամենածաւալուն ընկերվարական կազմակերպութիւնը Յանձկաստանում, ներկայ վտանգաւոր ու պատասխանատու վայրկեանի մէջ, կանգնած մնայ իր կոչումի բարձրութեան վրայ. շիտակ, լոյեալ զդացումներով տոգորուած՝ նա թէ մի կողմից մղում տուեց—իր ուժերի համեմատ—միջազգային բողոքի հոսանքին և թէ միանգամայն ընձեռեց իր բարոյական աջակցութիւնը օսմանեան կառավարութեան, մոռանալով առժամապէս իր յատուկ հայկական գանգատները, թեև տալով հայրենիքի պաշտպանութեան համար կոչուած դահլիճին, յորդորելով միաժամանակ հայ ժողովրդին ու իր կուսակցական մարմիններին՝ չը զլանալ իրենց բարոյական աջակցութիւնը կառավարութեանը, պատրաստուելու „Իթթիհատ“ կոմիտէների հետ՝ ընդդէմ պատահականութեանց...

Ահաւասիկ մի քանի հատուածներ Հ. Յ. Դ. Արևմտեան Բիւրօի՝ պատերազմի առթիւ հրատարակած շրջաբերականից (հայերէն և տաճկերէն).

Օսմանցի հայրենակիցներ,

Պատերազմի աղէտին առջև կը դանուի մեր հայրենիքը—այն մեծագոյն աղէտներէն մէկը, զոր բռնական բնազդներն ստեղծեցին և որոնց գոյութիւնը աղբիւրն է բոլոր ժողովուրդներու դժբախտութեան և քայքայիչ հակամարտութեան։

Յարձակողը մենք չենք, մենք չենք և նախայարձակը։ Այս անուրանալի յարձակումը ո՛չ մէկ արդարացում ունի իր եռին՝ ո՛չ միջազգային օրէնքը, ո՛չ այ բարոյական ոգեբունը մը—բայց եթէ զրաւորին քմահաճոյքը և նուաճման ախորժակը։

Վերածնող Թիւրքիան իրաւունք ուներ ակնկալելու քաղաքակիրթ աշխարհին համակիր աջակցութիւնը, քաղաքական և ընկերային իր բնաշրջումի այնքան ծանր երկունքին հանդէպ։

Ատոր փոխարէն՝ անհուն ցաւով և դառնութեամբ է որ կուգանք հաստատելու, թէ հարւածը կը ստանանք այն երկրէն, որ հազիւ 40 տարի առաջ հերոսական ճիգերով կը յաջողէր պահպանել իր քաղաքական միութիւնը, այն երկրէն՝ որ Կարիպալտիներ և Մաձզինիներ տուաւ մեզի՝ իբրև ուսուցիչ ազգային անկախութեան և ժողովուրդներու ազատ զարգացումին։

Իտալիոյ բռնական այս արարքը կրկնապէս յանցապարտ է, եկած ըլլալով խանդարելու դէպի քաղաքակրթութիւն ձգտող Նոր Թիւրքիոյ վերածնութեան գործը։

Թող չկարծուի, սակայն, թէ ծանր կացութեան հանդէպ կը մնանք մեր ալ յանցանքին բաժինը—երբէ՛ք։

Առաջ սկզբունքներէ զուրկ այն թեթևամիտ քաղաքականութիւնը, որուն հետևեցաւ Հաղդր փաշա և իր կազմած դահլիճները՝ պատասխանատուութեան մեծ բաժին մը ունին աղէտին այս գահավիժումին մէջ։

Մեր կառավարութիւնը իր կարճատես քաղաքականութեամբ Թիւրքիայէն ուզեցաւ այն պետութիւնները, որոնց շահերը կրնային հաշտուիլ մերիններուն հետ կամ չէին հակասեր անոնց, նախասիրութիւններ ցոյց տալ ուրիշներու՝ որոնք այս երկիրը կր նկատեն լոկ եամալ շահերու շուկայ մը և գործիքը իրենց քաղաքական դաւերուն։

Մոռցան, որ Թիւրքիան իր քաղաքական պայմաններու և շահերու տեսակէտէն բարեացակամ չէզոքութիւն մը պարտէր պահպանել բոլոր իր դրացիներուն հանդէպ, առանց մէկը նպաստաւորելու ի մեաս միւսին, խնայելով մեր երկրին՝ քաղաքական սադրանքներու ասպարէզ մը ըլլալու վտանգը։ Եւ ահա այսօր, գերագոյն վտանգի պահուն, կը քաղենք այդ կորստաբեր մոլորումներուն պտուղը.—մնս մինակ կը գտնուինք, լքուած մեր „բարեկամներէն“, որոնք կրնային կանխել աղէտը, եթէ անկեղծ եղած ըլլային, լքուած և ա՛յն երկիրներէն, որոնք մեզմէ հեռացնելու համար ըրինք ամեն կարելին։

Մեր ներքին քաղաքականութիւնը, որ առանցքը պիտի ըլլար այս երկրին առաջադիմութեան՝ զոհեցաւ արտաքին արկածախնդրութիւններու, մատնուեցաւ եղեռնական անտարբերութեան մը՝ մեր վարիչներու կողմէ։ Ասոնք տգիտաբար արհամարհեցին երկրին բարեկեցութիւնը բարձրացնող տնտեսական բարենորոգումները, անզգ թողուցին հարկերու տակ ճզմուած աշխատաւոր ժողովուրդը, հին ռէժիմեան սիստեմով՝ 30 միլիոն օսմանցիներուն շահերը զոհեցին քանի մը տասնեակ հարստահարիչներու և ուատապետներու շահերուն, չյարգեցին Թիւրքիոյ իսլամ և քրիստոնեայ ցեղերուն բնական իրաւունքները, փոխանակ մերձեցնելու զանոնք՝ փոխադարձ անվստահութիւն սերմանեցին անոնց միջև։ Ներքին արիւնհեղութիւններէ ետք միայն խորհեցան ճզճիմ բարենորոգումներու մասին։ Կարծես յատուկ նպատակ մը ունեցած ըլլային անդամալուծելու և տկարացնելու Թիւրքիան։

Տարնապէ այս պահերը չեն սակայն, որ հաշտեցարդարի առիթ կրնան ծառայել,—հակառակ որ մենք հայերս բացառիկ տառապանքներու տակ ճզմուեցանք 30 տարի անընդհատ, և հակառակ որ վերջին երեք սահմանադրական տարիները ակնկալուած բարւոքումը չբերելէ զատ մեր թշուառ ժողովուրդին՝ ստոիճանաբար անիշխանութեան, ապօրինութիւններու և ոճիրներու թատր դարձուցին հայաբնակ նահանգները։

Ո՛չ, ընդհանուր հայրենիքին սպառնացող վտանգին առջև

մենք կը դագրեցնենք մեր բողոքները, այն մեծ վատահութեամբ թէ հեռու չէ վերջապէս ողջմտութեան և արդարութեան յաղթանակը՝ հին ռէժիմեան աւանդութիւններուն վրայ։

Արդի ծանր վայրկեանը չէ հաշուեյարդարի պահ, կը կրկնենք մենք։ Հրդեհը ծագած տեղն չեն փնտռեր ու կախեր հրձիգը, այլ ճարը կը խորհին ջուր հասցնելու և կրակը մարելու։

Իսկ վտանգը անցնելէ ետք, մենք ամենքս ալ, զաւակները այս երկրին, կրկնակի խրատուած մեր վարիչներու ապիկարութեան շնորհիւ ստացած դառն ու դժնդակ դասերէն՝ աւելի ուժգին պիտի պահանջենք ընդմիշտ հրաժարիլ քաղաքական արկածախնդրութիւններէ, շեշտելով անյապաղ կիրառման պէտքը արմատական բարենորոգումներու։

Ցիշելու ենք միշտ, որ ինչպէս ամեն յետամնայ երկիր, Թիւրքիան ալ իր կարգին, պիտի չկրնայ դիմադրուիլ առաջադէմ երկիրներու առաջխաղացքին, եթէ չդիմանայ զրաւցնել իր ներքին ուժերը, հաւասարելու համար անոնց թէ մտաւորական, թէ անտեսական և թէ իրաւական տիրոյթներուն (domaine) վրայ։

Վտանգը մեկ չէ։ Պատերազմը կրպասունայ ոչ միայն մեր հայրենիքին ամբողջութեանը, այլ յղի է նաև անակնկալ բարդութիւններով և ներքին հակահարուածներով, որոնց առջև պատրաստ գտնուելու են ամենքն ալ, բոլոր քաղաքացիները, առանց դիզի խորութեան։

Ազատական բոլոր տարրերը, բոլոր ճշմարիտ հայրենասէրները և անոնց հետ միասին մեր երեսփոխանները Օսմ. Խորհրդարանին, իրենց ողջմտութեան գերագոյն ապացոյցը տալու են այսօր՝ միացնելով իրենց ջանքերը և ուժերը, անսասան պահպանելու համար ներքին համերաշխութիւնը բոլոր կուսակցութիւններուն և ցեղերուն միջև և փութով վերջացնելու համար այս պատերազմը, որպէս զի նոր եռանդով և աւելի ծանրախոհ լրջութեամբ շարունակել կարենանք ընդհատուած աշխատանքը, նորազարդ Հայրենիքի վերածնութեան մեծ և դժուարին գործին համար։

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ԿՈՒԿՈՒՆԵԱՆ

Նորէն Սիբի՜ր... Կուկունեանը դատապարտուած 15 տարեայ աքսորի...

Ցած, անհոգի բռնակալութեան այդ նոր ակտը զայրոյթի հեղեղ պիտի յարուցանէ հայ գաղափարական երիտասարդութեան սրտերուն մէջ, որ արդէն իսկ լեցուն են անհաշտ ատելութեամբ դէպի այդ վայրագ, անգիտակից դահիճները։ Դրակոնեան մի վճիռ, որ գուցէ նմանը չունի՝ անգամ ռուս յեղափոխական ցաւոտ տարեգրութեան մէջ։ 15 տարի արդէն ապրած Սիբիրեան աքսորավայրերուն մէջ, տաժանակիր աշխատանքի անիծակուռ խուցերի մէջ՝ մի մարդ, մի աւերակ, բարբարոսութեան մի տանջուած ու սպառուած զոհ՝ Նորէն՝ ահա պիտի բռնէ նոյն Սիբիրի ճանապարհը, նոյն տանջալի նահատակութեան, և աւա՜ղ, մահուան ուղին։ Եւ ինչի՞ համար.. 1906 թուականին, երբ բովանդակ Ռուսաստանը ցնծում էր նորանուաճ ազատութեան գրկում, այդ դժբախտ աքսորականն ևս, Հայրենիք վերադառնալով, իբր թէ շարունակել է ինչ որ մի տեղ՝ իր յեղափոխական քարոզը։

Վայրագութեան գագաթն է։ Աւելի հեռուն չի կարող գնալ ամենատմարդի ռէժիմը։ Աւելի հեռուն գուցէ չի գնացել՝ անգամ Չերնիշեվսկիներին Սիբիրեան տունդրաներուն մէջ կենդանի թաղող Նիկոլայեան բռնապետութիւնը։ Կոկովցեվ-Ստակարովեան „նոր կուրսը“ մտադիր է ահաբեկել հայ երիտասարդութիւնը, բայց չի աջողի։ Վերջինը կը յարատևէ ինքնապաշտպանութեան և ազատութեան իր որդեգրած հաւատամքի մէջ և կը մնայ միշտ աներկիւղ պաշտպան այն բոլոր դատերի, որոնց անունով Սարգիս Կուկունեան իր քաջարի խմբի հետ քսանուվեց տարի սրանից առաջ, ծածանեցրեց իր դրօշը Ղարս-Էրզրում ճանապարհի վրայ։

---

## ԼԱՖԱՐԳ

„Ուղղափառ“ մարքսիզմի վետերաններից մէկն էր, այդ վարպետութեան գրեթէ առաջին քարոզիչը՝ Ֆրանսիայում։ Իբրև այդպիսին՝ վայելում էր մի յայտնի հեղինակութիւն, բայց նա չունէր իր աշակերտ—Ժիւլ Գեդի իմացականութիւնն ու խառնուածքը, չունէր և նրա հռչակը։ Գեդ շատով գերազանցեց իր ուսուցչին, բայց յետոյ ժողովուրդ եկաւ և ստերի մէջ թողեց նրանց երկուսին էլ։ Հին ֆրանսիական սոցիալիզմի յաղթանակն էր դա՝ ընդդէմ նոր, գերմանական փորը ինչ չոր, միակողմանի ու նեղահայեաց դպրոցի։ Պրուդոնը, Բլանկին, Մալսնը յաղթահարում էին Մարքսին և Էնգելսին *։ Հին, յեղափոխական բլանկիզմն անդամ—յանձին Վայիանների ու Սոնքաների — միացաւ, cause commune արեց Հայրենիքի ծանր, տագնապալի վայրկեաններում (Դրէյֆուսեան դատ և այլն)—ժօռէսի հետ, ոչ Գեդի ու Լաֆարգի Վերջինները, սոցիալիզմի մի տարաբերժ մեկնաբանութեամբ՝ չափազանց ն ե ղ ց ն ու մ էին սոցիալական կուի դաշտը, դարձնում էին այդ կուիը նեւթապաշտական չոր ու գձուձ „ֆորմուլների“, բանաձևերի մէջ. հաշակում էին, որ պրոլետարական, դասակարգային կռիւներից դուրս, ընկերվարական կուսակցութիւնը չպէտք է զբաղուի այլ դատերով, թէկուզ լինին նրանք գաղափարական, համամարդկային, ազնիւ դատեր։ Աւելի ևս. նրանց մեկնութեամբ ազնիւ դատ է միմիայն պրոլետար-գործաւորի դատը, իսկ մի „բուրժուա“, թէկուզ մի Դրէյֆուս, որ զինուորական ատեանի քստմնելի տնօրինութեամբ՝ նահատակուել է երկար տարիներ ամենասոսկալի բերդարգելութեան մէջ,—հեռաքրքիր չէր ֆրանսիական մարքսիստներին։ „Դրէյֆուս բուրժուա է, թող բուրժուաները հոգան նրա դատը“... Այսպէս ահա պատճառաբանեցին Գեդ և Լաֆարգ և իբրև հեռատեսական մարքսիստներ, ձեռնպահ մնացին այդ հնկայ և արհաւիրալի դատի ընթացքում, որ իբրև գերագոյն արդարութեան ու մարդկայնութեան դատ՝ էլեքտրականացրել էր ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը։

Այդ չոր ու նեղմիտ մեկնաբանութիւնը սոցիալիստական վարդապետութեան՝ չէր յարմարում ֆրանսիական սոցիալիստների խառնուածքին ու ճաշակին և նրանք ահագին մեծամասնութեամբ թեքուեցին դէպի գործօն ու պայքարող ժօռէսիզմն ու բլանկիզմը, որոնք կրող էին հանդիսանում ֆրանսիական ընկերվարութեան իդէալաշունչ աւանդութիւններին, նրա ընդհանուր-մարդկայնական հարիւրամեայ ձգտումներին։

Գաղափարական հակամարտութիւնը անդրադարձաւ և անձնական յարաբերութիւնների վրայ, Գեդ և Լաֆարգ ուժգնօրէն ընդհարուեցին ժօռէսի հետ և Լաֆարգը, մասնաւորապէս, անողորմ եղաւ վերջինի վերաբերմամբ, չխնայեց ամենակծու, վերաւորական մակդիրներ։ Կրքի այդ մոլեգին բռնկումներ, միայն վարդապետութեան նեղսիրտ մեկնաբանութիւնների ու նեղմիտ տակտիկի հետ՝ պաղեցրին ֆրանսիական աշխատաւորութեան և սոցիալիստ մտաւորականութեան շարքերը, և Լաֆարգը, Մարքսի փեսան, ամենահին

*) Իրողութիւն է, որ այսօր Ֆրանսիայի սոցիալիստ մտաւորականութեան, պրոլետարիատի եւ պարլամենտական սոց. հաւատքի խոշոր մեծամասնութիւնը ժ օ ռ է ս ե ա ն է։

գործիչներից մինը, „տնտեսական մատերիալիզմի“ պատաս-տողը Ֆրանսիայի մէջ, գրեթէ բոլորովին մոռացուեց վերջին 10—15 տարուայ ընթացքում, ապրեց հեռու քաղաքական կեանքից, երբեմն-երբեմն երևան գալով սոցիալիստական մամուլի ու հրապարակային ատենախօսական ժողովների մէջ *)։ Նա զբաղուեց գլխաւորապէս տեսական աշխատանքներով, գրեց յօդուածներ „Neue Zeit“-ի մէջ, ուր ձգտում էր հիմնաւորել „տնտեսական մատերիալիզմի“ թէորիան կեանքի և մտքի բոլոր աշխարհներում, նաև այսպէս կոչուած „բարձր իդէօլոգիայի“ մէջ, կրօնի, փիլիսոփայութեան և այլն։ Անա ջող։ Անգամ մարքսիզմի մեծ վարպետը, Կարլ Կաուցկին չի փորձել լուսաբանելու փիլիսոփայութեան ու կրօնական մեծ դոգմերի ծագումն ու էւոլիւսիոնը՝ „տնտեսական մատերիալիզմի“ ֆորմուլներով։

Լաֆարգի տեսական մարզանքները ընդհանրապէս միջակ արժէք ունին։ Ամեն տեղ նա նոյն քարացած ֆորմուլների դատն է փաստաբանում, ամբողջ պատմութեան մէջ, հասարակական կեանքի ու մտքի բոլոր այլազան արտայայտութիւնների աշխարհում՝ նա նոյն անհաշտ և կամակոր դոգմապաշտն է, ամեն տեղ տեսնում է միահեծան տիրապետութիւնը նիւթական մղումների և դասակարգային ախորժակների։ Մի դեղեցիկ օր, 1899-ին, պարիզեան իր մի դիտական դասախօսութեան մէջ, ի մեծ զարմանս ունկնդիրների, յայտարարեց, որ ժամանակակից փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը (և ոչ միայն հասարակական դիտութիւնը) „բուրժուական“ է, թշնամի պրոլետարիատի։ Դարվինիստ-բնագէտներ, բիոլոգներ ու սոցիոլոգներ, պատմագէտ-հետազօտողներ և այլն—բոլորն էլ իրենց հետազօտութիւնների մէջ ներշնչուած են դասակարգային շահերով, ղեկավարուում են իրենց դասակարգի, բուրժուազիայի, տեսակէտներով...

Այսօր արդէն հնացած է այդ դոգմային, տարապայման մտայնութիւնը. լաֆարգիզմը, եթէ արել է նուաճումներ — դա միայն ռուսական սոցիալ-դեմոկրատների և նրանց հետևողների շարքերումն է։

Լաֆարգի յիշատակը մնում է յարգելի ամբողջ միջազգային սոցիալիստ ընդհանրութեանը այն զգայի ծառայութիւններով, որ նա մատուցել է իբրև ռահվիրայ և իբրև քարոզիչ, պրոպագանդիստ սոցիալիստական դաղափարի։

Վերջերս, սակայն, դառնութեամբ տեսնում էր, թէ ինչպէս սոցիալիզմը միշտ աւելի և աւելի հեռանում է այդ դոգմային ու սխալ մեկնութիւններից և նշմարում է պատմական էւոլիւսիոնի մեծ հոսանքում՝ այլ կարգի մղումներ բացի նիւթականից և դասակարգայինից։ (Տես այդ մասին՝ «Դրօշակ»-ի նախընթաց համարը)։

---

# ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐՇԱՒԸ ԵՒ ԹԻՒՐՔԻՈՅ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

## III

Արևելեան խնդիրը վերսկսւում է օսմանեան թատերաբեմում... աւելի գրանդիոզ և ահաւոր բաղխումների հեռապատկերով։

Մինչև օրս այդ խնդիրը դառնում էր անգլօ-ռուս հակամարտութեան շուրջը։ Այսուհետև նա կ'ամփոփի անգլօ-գերման մրցակցութեան մէջ *)։ Էութիւնը նոյնն է. դա յաւիտենական պայքարն է յանուն չարատանջ հեգեմոնիայի, յանուն քաղաքական և տնտեսական առաջնութեան։ Բօսֆորի ափերում, կարելի է ասել, վճռւում է այսօր եւրոպական գալոց հաւասարակշռութեան ճակատագիրը։ Այնտեղ է ձգւել Weltpolitik-ի հզօր խարիսխը։ Այնտեղ է խաղացւում գերման-գաղութային քաղաքականութեան ամենագլխաւոր, ամենադրամատիկ արարածը։ Պէ՞տք է հարածել մի գեղեցիկ օր „համաշխարհային տիտանին“, պէտք է պատրաստել այդ հարածի համար։

Եւ ահա—զրահանաւ՝ զրահանաւի վրայ։ Դեռ չի հասել, ի հարկէ, անգլիական նաւատորմի զօրութեան, դեռ գրեթէ միայն վերջինի երրորդ մասն է կազմում գերմանականը, բայց նրա ծաւալն աճում է անսովոր արագութեամբ։

Եւ՝ այդ է որ բորբոքում է Մեծ Բրիտանիայի հակամարտութիւնը, երկիւղ է ազդում „համաբրիտանական տիրապետութեան“ ռահվիրաներին, գրգռում է նրանց պաշտպանողական ռազմական ախորժակները, մղում է նրանց դէպի անխուսափելի ընդհարում։

Մերթ ընդ մերթ վրայ է հասնում տագնապը, երկու մեծ պետութիւնների յարաբերութիւնները ստանում են լարման բարձրագոյն աստիճանը և պատերազմը թւում է մօտալուտ, ճակատագրական։ Եւ ամեն անգամ, այնուամենայնիւ, հաստատւում է որևէ կերպ modus vivendi, յետաձգւում է պայթումը... երկու կողմն, էլ անտարակոյս, գիտակցելով, թէ ինչ ահաւոր հետևանքներ կարող է ունենալ այդ պայթումը կապիտալիզմի ու բուրժուական տիրապետութեան համար—այժմեան աշխարհում, ուր միջազգային սոցիալիզմը իր հսկայ ու համատարած բանակներով, հանդէս է գալիս իբրև „իրաւարար“ գործոններից մինը՝ պատրաստ գահավիժելու հին, ոճրանիւթ կարգերի վրայ և վերջ դնելու բոլոր ընչաքաղց և մարդասպան ախորժակներին։

Մթնոլորտը, սակայն, միշտ աւելի ելեկտրականում է և կը գայ մի օր, երբ այլ ևս ոչ մի փոխադարձ „կենցաղաձև“ հնարաւոր չի լինի երկու հզօր ըմբիշների միջև։ Ուշագրաւ են այս մի քանի տողերը, որ հրատարակեց 1905-ին անգլիական „Army and Navy“ կարևոր օրգանը.

„Մի մեծ նաւատորմ է ծնւում մեզնից շատ մօտ և հսկայական արագութեամբ։ Դա նպատակ ունի՝ խլելու մեզնից ծովերի հրամանատարութիւնը... Գերմանացիք ուզում են առիթ ստեղծել և փորձել իրենց ուժերը... Արդ. մենք միանգամայն վստահ ենք մեր անվիճելի գերազանցութեան վրայ։ Գերմանիայի յարձակման հետևանքը կը լինի Կայզէրի նոր խաղալիքի կործանումը“...

---

*) Բնորոշ է թուում վարդապետեանց եւ մանաւանդ անձնպաշտութեան նիւթի տեսակէտից այն հանգամանքը՝ որ սոց. ռահվիրայի եւ հիմնադրի թաղմանը հաւաքւում են ընդամենը 15 հազար մարդ այն Պարիզից, որ ունի հարիւր հազարաւոր գիտակից բանկերվարականներ:

*) Հարկաւ, այդ չի նշանակում, թէ միւս պետութիւնները չունին այլ ևս յաւակնութիւններ մերձաւոր Արևելքում։ Դաւճողական ախորժակները դեռ վառ են... անգամ սահմանադրական Թիւրքիոյ հանդէպ։ Աւստրիան շարունակում է ձգտել դէպի Սալոնիկ, Բուլգարիան, Սերբիան հետապնդում են Մակեդոնիային, Յունաստանը՝ Կրէտէին, Իտալիան՝ Ալբանիային, Ռուսաստանը քնաւ չի լքել իր երազները՝ Թիւրքահայաստանի նկատմամբ։ Աւելի ևս. ցարիզմը դեռ փայփայում է իր դարաւոր տենչը՝ ունենալ գէթ մի հատիկ նաւահանգիստ Միջերկրականի վրայ (Բօսֆորն ու Դարդանելը փակուած են նրա առջև Բերլինեան դաշնագրով)։

Միաժամանակ նաւատորմի պատասխանատու վարիչն ներից մինը, Արտուր Լի, արտասանում էր իր սէնսասիոն ճառը.

„Դեռ նախ քան պատերազմի յայտարարութիւնը մաուլի մէջ լոյս տեսնելը, մենք կը տանք մի վճռական հարուած“ *)...

Գրգռումները շարունակուեցին և մարօկկեան տագնապի առթիւ։ Նրանք սկսած են դեռ 1896 թուի այն նշանաւոր օրից, երբ Վիլհելմ կայսր ղրկեց իր քաջալերիչ հեռագիրը Տրանսվալեան հանրապետութեան նախագահ Կրիւգերին։ Այն ժամանակ հակաբրիտանական արշաւանքի նախագիծը արդէն իսկ մշակուած էր։ Եւ այն ժամանակից ի վեր անգլիական մամուլի և հանրային կարծիքի որոշ տարրեր, քարոզում են շարունակ, որ գերմանական յարաձուն սպառնալիքի հանդէպ՝ պէտք է հսկել անդադար և բարեպատեհ վայրկեանին զարկ տալ ու վաղաժամ ջնջել թշնամի նաւատորմն ու ծովային զօրութիւնը։

Բրիտանական ահազանգը ունի իր խորունկ պատճառները։ Ի՞նչ կը լինէր Անգլիան, առանց իր ծովային տիրապետութեան, առանց իր լայնարձակ ու արգաւանդ գաղութների.. Մի բաւական խղճուկ կղզի, որ դիւրին էր պաշարել և սովամահ անել։ Մի փոքրիկ երկիր, որի դաշտերը գրեթէ բոլորովին ամայացել են և որ ապրում ու հարստանում է իր վիթխարի գործարաններով, արդիւնաբերութեամբ և իր անթիւ նաւահանգիստներով։

Այդ ծաւալուն արդիւնաբերութեան համար անհրաժեշտ են հեռաւոր շահաստաններ՝ թէ ապրանքներն արտահանելու և թէ հում նիւթեր ամբարելու համար։ Իսկ այդ անհրաժեշտ, տիեզերական շուկաները պահպանել կարելի է մէկ պայմանով.—անխախտ պահել առևտրական և ռազմական նաւատորմերի այն հոյակապ շղթան, որ փաթաթուած է ովկիանոսներին։

Այդ մոգական շղթան է, որ փշրել է ուզում Գերմանիան։ Եւ այդ յամառ տենչն է, որ մղում է նրան դէպի Միջերկրականի նաւահանգիստները և դէպի Հնդկական ովկիանը։

Հետևենք քայլ առ քայլ այդ խիզախ արշաւին։

Գերմանական Weltpolitik-ը ուզում է հարթել իր ճանապարհը... փարփռելով խարխխները բրիտանական հմայքի ու ազդեցութեան։ Մեծ Բրիտանիան — աշխարհի ամենամեծ մահմեդական պետութիւնն է, քանի որ նա տիրում է Հնդկաստանի և Եգիպտոսի վրայ։ Այդ մեծածաւալ տիրապետութիւնը կարող է ամրապնդել և յարատևել միայն այն պայմանով, որ Անգլիան պահպանէ շարունակ բարեկամական յարաբերութիւններ մահմեդականութեան հետ, որ նա ճանաչի իբրև գերագոյն և ճշմարիտ հովանաւորը մուսուլման աշխարհի։ Այդտեղ նրան արգելք է լինում սուլթան-խալիֆը, որ իսլամի կրօնական և քաղաքական ըմբռնումների համեմատ՝ հանդիսանում է իսկական պարագլուխ և առաջնորդ բոլոր „հաւատացեալների“ և գործադրում է նրանց վրայ մշտնջենական խնամակալութիւն ու ազդեցութիւն։ Անգլիային վաղուց մտատանջում է այդ վտանգաւոր խնամակալութիւնը և նա ձգտում է ոչնչացնել այն։ Ահա թէ ինչու անգլիական քաղաքականութիւնը շարունակաբար դաւում է արաբների մէջ, Եմենում, սնուցանում ու խրախուսում է պարբերական ապստամբութիւններ Խալիֆի տիրապետութեան դէմ, դրդում է յայտարարել մի նոր խալիֆութիւն, դրդում է և Եգիպտոսի Խեդիվին ինքզինքը հովանաւոր հռչակել սրբազան քաղաքների—Մեկկայի ու Մեդինայի—որոնք բրիտանական քաղաքագէտների ծրագրով վաղ թէ ուշ պէտք է թօթափեն օսմանեան տիրապետութեան լուծը*)։

„Մահմեդականութեան հովանաւոր“... „Իսլամի իրաւունքների պաշտպան“...

Այդ մեծ տիտղոսը դառնում է հետզհետէ մի տեսակ համաշխարհային կռուախնծոր։ Նա այժմ հրապուրում է... Գերմանիային։ Անգլիան մասամբ իւրացրել ու արդարացրել է այդ տիտղոսը. Բիսմարկի յաջորդները ուզում են խլել Անգլիայից և այդպիսով կործանել նրա իշխանութիւնը մուսուլմանների վրայ, Վիլհելմ կայսրը—միակ, անկեղծ և գերագոյն հովանաւորը Իսլամի քաղաքական վարդապետութեան“ — ահաւասիկ Weltpolitik-ի հիմնական նշանաբանը։ Եւ Գերմանիան ձգտում է իւրացնել այդ տիտղոսը, Թիւրքիոյ միջոցով, նրա շնորհիւ, նրա աջակցութեամբ։ Անգլիային ձեռնտու է խորտակել սուլթան-խալիֆի հմայքը մահմեդական աշխարհի մէջ,—Գերմանիային, ընդհակառակը, ձեռնտու է ուժեղացնել այդ հմայքը, ուժեղացնել Թիւրք կայսրութիւնը, ուղղել բոլոր ուժերը բրիտանական ազդեցութեան դէմ, բորբոքել բոլոր ատելութիւնները ընդդէմ հզօր և ահաւոր ախոյեանի...

Շահերի և ձգտումների հակադրութիւնը կատարեալ է։ Պահելով սուլթան-խալիֆին իր տիրական ազդեցութեան տակ, հովանաւորելով օսմանեան կայսրութիւնը իր քաղաքական հմայքի ուժով, Գերմանիան կարող է միշտ կորզել նրանից տնտեսական մենաշնորհներ ի վնաս Անգլիայի, կարող է տէր դառնալ Միջերկրականն ու Պարսից ծոցը միացնող հսկայական ճանապարհին և տարածել իր շահագործումները, իր կապիտալի ու արդիւնաբերութեան տիրապետութիւնը փոքր Ասիայում, Միջագետքում, այդ հնադարեան և հրապուրիչ որբաններում, ուր մի ժամանակ երկրագործութիւնը ծաղկել էր, բարգաւաճել, ստեղծելով հացահատիկների ամենահարուստ շտեմարանը երկրագնդի վրայ։

Բացի այդ. Թիւրքիան, վերանորոգուած և զօրացած գերմանական խնամակալութեան տակ, զօրացած տնտեսութեամբ, ֆինանսներով, բանակով ու նաւատորմով՝ պիտի աճեցնէ, բնականաբար, իր հմայքն ու ազդեցութիւնը ամբողջ մուսուլման աշխարհի և ամենից առաջ՝ Եգիպտոսի, Հնդկաստանի մահմեդական ժողովուրդների վրայ, որոնք չնայած բրիտանական համեմատաբար թեթև, ազատամիտ ուէժիմին, չեն ձուլուել վերջնականապէս օտար, „գիավուր“ պետութեան մէջ և այսօր, ի դէմս իրենց երիտասարդ, խանդավառուող տարրերի, ցոյց են տալիս պարբերաբար սթափման և ըմբոստացման վտանգաւոր տրամադրութիւններ... Մի օր կը սասանի այդ հսկայ զանգուածը—և այն ժամանակ կը հասնի բրիտանական առիւծի համաշխարհային տիրապետութեան վախճանը։

Այդ է երազը պանգերմանիզմի։ Եւ նա

*) *Question diplomatiques et coloniales*, 1 յունիս 1905 թ.։

*) *Alexandre Ular: La Weltpolitik allemande et le monde musulman, La Revue, 1 Juin 1905.*

աշխատում է այդ ուղղութեամբ, յամառ, անդուլ ջանքերով պատրաստում է այդ ապագան, երբ — առանց դիմելու վառօդի ու թնդանօթի, առանց մտնելու բաց, ահաւոր ճակատամարտի մէջ ծովերի միահեծան թագուհու հետ—կը կարողանայ տալ նրան.. մահացու հարուածը։

Այդ ուղղութեամբ աշխատում է պանգերմանիզմը (համագերմանականութիւն) — ոչ միայն Պոլսում, այլ և... Փեցում, Տանժերում, Աֆրիկայի մահմեդական ժողովուրդների մէջ։ Այդ սիստեմի անխուսափելի ծնունդն է Մարօկկեան կնճիռը, որ մի քանի տարուց ի վեր ընդունել է այնքան սուր, համաշխարհային տագնապի կերպարանք և որ այս տարի քիչ էր մնացել յանգէր պատերազմի ու համաեւրոպական հրդեհի։ Այդտեղ ևս, Մարօկկի մէջ, Գերմանիան փորձեց—առանց սակայն աջողելու—թուլացնել, դուրս մղել մրցակից պետութիւնները, կամ գէթ ստանալ ազդեցութեան համահաւասար իրաւունք։ Ճանապա՞րհ պէտք է հարթել Միջերկրականի աւազանում։ Պէտք չէ՞, որ վերջինը մնայ սոսկ մենաշնորհ ախոյեանների, գլխաւորապէս Անգլիայի և Ֆրանսիայի։ Առանց այդպիսի ճանապարհի, առանց որևէ կայանի Միջերկրականի եզերքներում՝ Գերմանիան կը խեղդւի, կը տառապի, նրա ապագան—իբրև մեծ, գաղութային, համաշխարհային պետութեան—անյոյս է, կաշկանդուած, անփառունակ։

Ճանապա՞րհ—դէպի Արևելք։ Ամեն գնով, միայն ոչ արեան։ Ոչ Մարօկկի, ոչ Ստամբուլի համար՝ Գերմանիան չի նիւթի պատերազմ, արիւնհեղութիւն։ Պատերազմը դիւրին էլ չէ Անգլիայի պէս ոսոխի հետ։ Բոլոր անարիւն միջոցները խրախուսելի են։ Մակեավելի թելադրած բոլոր նենգ մաքսիմներն ու նշանաբանները կազմում են գերմանական քաղաքականութեան աւետարանը։ Ի՞նչ փոյթ, թէ Կանտի ու Շիլլերի հայրենակիցները, ինչպէս և բոլոր միւս եւրոպացիք, միայն արհամարհոտ զգացումներ ունին իսլամ դաւանող պետութիւնների բարքերի համար, նրանց բարբարոս յետամնացութեան և նրանց անշարժ քաղաքական դաւանանքների համար։ Պէտք է ուժ տալ, այնուամենայնիւ, այդ պետութիւններին, խրախուսել նրանց համիսլամական, յետադէմ ձգտումները, պէտք է անջատել իսլամ ցեղերը քրիստոնեայ և մրցակից պետութիւններից, արիւն ու ոգի ներշնչել մահմեդական յետամնաց զանգուածներին և մղել նրանց դէպի կռիւ... ընդդէմ այն „գիաւուր“, քաղաքակիրթ պետութիւնների, որոնք արգելք են լինում բիսմարկեան հայրենիքի յառաջխաղացութեան...

Այդպէս է պահանջում գերմանական յարաճուն կապիտալիզմի շահը, այդպէս է հրամայում դրամատէր, ընչաքաղց դասակարգի բարգաւաճումը։

Գերմանիան այդպիսով հանդիսանում է մեր օրերում, իբրև գերազանցապէս պանիսլամիստ, համիսլամական մի պետութիւն, մի ուժ, որ նպատակ ունի կազմակերպել, ի մի ձուլել բովանդակ մահմեդականութիւնը, ընդդէմ իր սեփական թշնամիների, մրցակիցների։ Մի ուժ, որ իր հարուստ ֆինանսներով, իր ահագին միջազգային կշիռով, իր հոյակապ տնտեսական ձեռնարկներով ձգտում է միշտ աւելի և աւելի տիրանալ մահմեդական զանգուածների սրտերին ու մտքերին և ներշնչել երկրագնդի մէկ ծայրից մինչև միւսը, Տանժերից մինչև Կահիրէ, մինչև Պոլիս ու Հնդկաստան, ներշնչել առանց այն էլ յետադէմ և քրիստոնեայ քաղաքակրթութեան թշնամի մահմեդական ընդհանրութեանը այն չարաշուք դօգմը՝ որ իսլամը լոկ կրօն չէ, այլ և քաղաքական մի կազմակերպութիւն, որ Մարօկկի, Թիւրքիոյ, Եգիպտոսի, Պարսկաստանի, Հնդկաստանի մահմեդական զանգուածները կապուած են եղբայրական, արիւնակցական կապերով, որպէս մի ցեղ, գրեթէ միաձոյլ մի ազգութիւն, որը պարտաւոր է վաղ թէ ուշ, իբրև մէկ մարդ, ծառանալ և խորտակել օտարի, „աշխարհածաւալ գիաւուրի“ քաղաքական և տնտեսական տիրապետութեան լուծը։

Սև՞ է Գերմանիայի քարտէզը առհասարակ արտաքին քաղաքականութեան ասպարիզում, սև՞ է նրա կարիքը ազգերի ազատագրութեան մարտադաշտում, երբէ՞ք նա չնպաստեց որևէ փոքրիկ, հալածական ժողովրդի վերածնութեան, լինի Կրետէ, Հայաստան, Մակեդոնիա, երբէ՞ք նա չխուովեց ստրուկ ազգերի մարտիրոսութեան պատկերներով, այլ միշտ միայն խոչընդոտ դրեց նրանց ազատարար պայքարի առջև, միշտ քաջալերեց դահիճներին.. Եւ այսօր ահա փառապակը այդ անհրապոյր, ծայրայեզօրէն իրապաշտ, terre à terre քաղաքականութեան... Գերմանիան—համիսլամական...

Այսօր դեռ, Սահմանադրական Թիւրքիոյ մէջ — որի արշալոյսը, անտարակոյս, նողկանք միայն պատճառեց կայզէրին ու իր բիրտ սպասաւորներին — Գերմանիայի թիւրքամոլ քաղաքականութիւնը չի թաւում յետադէմ ու հակակրելի։ Ընդհակառակը, նա երևոյթ ունի՝ քաջալերելու ազատ, սահմանադրական պետութեան անկախութիւնը, ուժեղացնելու և հարստացնելու այն։

Սակայն, այդ թիւրքամոլ քաղաքականութիւնը ծայր տուեց, իբրև սիստեմ, տակաւին Աբդիւլ Համիդի օրով։ Եւ որքա՞ն թունաւոր պտուղներ տուեց... Կրետէ, Հայաստան, Մակեդոնիա անողորմ կերպով զոհաբերուեցին այդ չոր, գծուծ և իրապաշտ սիստեմի խորանին։ Բիսմարկի հռչակաւոր խօսքն արդարացաւ. նա կիրառուեց հարազատութեամբ երկրի արտաքին քաղաքականութեան մէջ։ „Ամբողջ արևելեան խնդիրը մի պոմերանեան զինուորի ոսկորը չ՚արժէ“։ Այդպէս յայտարարեց ամենաուժեղ պետութիւններից մինը, որ ստորագրել էր Բերլինում 61-րդ, 23-րդ և ուրիշ տխրահռչակ յօդուածները։

Արդէն իսկ Բերլինի վեհաժողովում Գերմանիան փրկչի դեր ստանձնեց „Հիւանդ մարդու“ վերաբերմամբ։ Նա պատ դրեց ռուսական արշաւանքի դէմ — դէպի Ստամբուլ „Բարեկամութիւնը“, կարելի է ասել, այդ օրերից էլ կնքուեց։ 1870-ի ֆրանս-պրուսական պատերազմն ևս որոշ չափով նախապատրաստել էր Թիւրք և գերման բարեկամութեան այդ հողը։ Ցաղթող „Ալլմանիա“-ի հմայքը, մինչ այն կատարելապէս անարժէք, այնուհետև սկսում է արագ տարածուել մահմեդական արևելքում, ահ ու պատկառանք ներշնչելով մասնաւորապէս Թիւրքերի։ „Հիւանդ մարդը“ աճապարեց օգտուել յաղթողի այդ զինուորական հմայքից և նրա օգնութեամբ կազդուրել իր խոր վէրքերը։ Ամենից խորը—զօրքի փտախտը։ Սուլթանը հրաւիրեց գերմանական սպաներ ու բարձրաստիճան զինուորականներ, որոնք կարճ միջոցում վերակազմեցին օսմանեան բանակը,

դարձրին լուրջ, պատկառելի, դիմադրական ու յարձակողական ոյժ։

Աւելի ևս „Թանկագին“ էր Գերմանիայի աջակցութիւնը միջազգային կնճիռների, արևելեան յարաբերութեան տագնապի մէջ։ Հեռնպահութիւն, լիակատար անտարբերութիւն — այդպէս եղաւ նշանաբանը կայզէրի քաղաքականութեան՝ հայ, կրետական, մակեդոնական ճգնաժամերում, երբ ապստամբութիւնների և ջարդերի կարմիր հրդեհը պատել էր ամբողջ Արևելքը, յարուցանելով մի քանի մեծ պետութիւնների միջամտութիւնը։ Աւստրիան գնաց Գերմանիայի հետ։ Սուլթանը հպարտ էր պանգերմանիզմի այդ եղբայրական աջակցութեամբ։

Ամենից ցինիկ և ամենից վայրագ արտայայտութիւն ստացաւ Գերմանիայի ընթացքը հայերի հանդէպ։ Ցայտնի է, որ 1896-ի Պոլսի ջարդերի միջոցին Աբդիւլ Համիդ և Վիլհելմ II փոխանակեցին թանկագին նուէրներով և ողջոյններով։ Ցայտնի է և այն, որ հայանպաստ պրոպագանդը խստիւ արգիլեց Գերմանիայում, ոչ մի միտինգ, ոչ մի բանախօսութիւն... Մամուլն անգամ պաշարելի դիրք էր բռնել, և հազադէպ հայ քարոզիչները արտաքսւում էին Բերլինից։

Բաւական չէ այդ։ Գերմանիայի թելադրութեամբ, արգելւած էր հայկական ուէֆօրմների պրոպագանդը և այն բոլոր երկիրներում, որ գտնւում են երեքպետեան Դաշնակցութեան, մասնաւորապէս Գերմանիայի, ազդեցութեան տակ։ Այդպէս — Ռումանիայում։ Հայ չարքաշ պրոպագանդիստները չէն մոռանայ այն բոլոր հալածանքները, բանտարկութիւններն ու վտարումները, որ նրանք կրել են այդ վատ պետութեան սահմաններում, ռումէն ստորաքարշ, համիդամոլ կառավարութեան հրահանգով...

Բոլոր միջոցները ընդունելի էին՝ Կարմիր-սուլթանին սիրաշահելու և տնտեսական արշաւի ուղին հարթելու համար։

Հետևենք դեռ այդ արշաւին։

---

# ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԸ

## ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՎՃԻՌԸ

Յեղափոխական Ատեանը, կազմւած Պարիզում Հ. Յ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ, քննելու համար այն գործը, որ ծագել է „Նոր-Դար“ Հայ լրագրի խմբագիր Սպանդար Ամիրջանեան Սպանդարեանի և „Դաշնակցութեան“ միջև, շնորհիւ այն բանի, որ վերջինի կենտրոնական օրգան „Դրօշակ“ թերթի մէջ հրատարակել է մեղադրանք Սպանդարեանի դէմ, իբր նա ունեցել է յարաբերութիւններ Ոստիկ. Դեպարտամենտի հետ.

Ունենալով իբրև անդամներ՝ Ա. Ի. Գէյտ, ընտրւած իբրև դատաւոր, Սոց.-Յեղափոխական Կուսակցութիւնից, Բ. Ի. Իգօրև, ընտրւած նոյն պաշտօնով Ռուսաստանի Սոց.-Դեմօկրատ Բանւորական Կուսակցութեան կողմից և Ա. Ֆ. Սաաալ, ընտրւած իբրև դատաւոր և միանգամայն Ատեանի նախագահ վերոյիշեալ երկու դատաւորների կողմից.

Քննելով Ատեանին ներկայացւած փաստագրերը, լսելով իրազեկների (էկսպերտների) եզրակացութիւնը և վկաների ցուցմունքները, նմանապէս և Սպանդարեանի ու „Դաշնակցութեան“ ներկայացուցչի բացատրութիւնները. առաջադրեց իր լուծման՝ հետևեալ խնդիրները.

1. Մեղադրւո՞ւմ է արդեօք Սպանդարեանը—դատի մէջ պարզւած հանգամանքներով—թէ նա եղել է Ոստիկ. Բաժանմունքի ծառայութեան մէջ։
2. Մեղադրւո՞ւմ է արդեօք Սպանդար Սպանդարեանը, թէ նա (կամ նրա գիտութեամբ, իր ընտանիքը), իր վիճակը թեթևացնելու համար կամ ուրիշ շարժառիթներով, դրդել է Կոնստանտին Սպանդարեանին՝ մտնելու Ոստիկ. Բաժանմունքի ծառայութեան մէջ։
3. Մեղադրւո՞ւմ է արդեօք Սպ. Սպանդարեանը այն բանի մէջ, թէ Կոնստ. Սպանդարեանը Ոստիկ. Բաժ. ծառայութեան մտնելուց յետոյ՝ ինքը (Սպանդարը) գործակցել է նրան՝ քաղաքական խուզարկութիւնների մէջ։
4. Բարեխիղճ կերպո՞վ է արդեօք վարւել „Դաշնակցութիւնը“, մեղադրելով մամուլի միջոցով Սպանդար Սպանդարեանին Ոստիկ. Բաժանմունքի հետ յարաբերութիւն ունենալու մէջ. և ունեցե՞լ է նա արդեօք հիմքեր՝ համարելու մեղադրանքի տեսակները, իբրև արժանահաւատ փաստեր։
5. Շե՞ն խախտել արդեօք „Դաշնակցութեան“ կողմից ձևական (ֆօրմալ) երաշխաւորութիւնները իրաւունքների, որոնք պատկանում են անհատին, որի դէմ հրապարակով ուղղւում է մի այդպիսի մեղադրանք։

Առաջին երեք հարցերին Ատեանը պատասխանում է բացասաբար։ Դատի մէջ պարզւած գործի հանգամանքները ոչ միայն չը հաստատեցին ա) թէ Սպ. Սպանդարեանը մեղաւոր է Ոստիկ. Բաժանմունքի հետ դատապարտելի յարաբերութիւններ ունենալու մէջ, ուղղակի կամ իր եղբայր Կոնստանդին Սպանդարեանի միջոցով. բ) թէ նա որևէ ճնշում է գործ դրել Կոնստ. Սպանդարեանի վրայ, որպէս զի դրդի նրան մտնելու Դէպարտամենտի ծառայութեան մէջ. կամ գ) թէ նա գործակցել է Կոնստանդին Սպանդարեանին քաղաքական խուզարկութիւնների մէջ — այլ և չեն կարող հիմք ծառայել կասկածելու Սպ. Սպանդարեանին այդօրինակ արարքների մէջ։

Չորրորդ հարցին Ատեանը պատասխանում է հաստատաբար։ Մինչև այն վայրկեանը, երբ մեղադրանքը Սպանդար Սպանդարեանի դէմ հրատարակւել է „Դրօշակի“ մէջ, հանգամանքների բովանդակ գումարը եղել է այնպէս, որ „Դաշնակցութիւնը“ ունեցել է բաւարար հիմքեր՝ համարելու մեղադրանքը կատարելապէս արժանահաւատ. անկեղծօրէն համոզւած է եղել Սպ. Սպանդարեանի մեղաւորութեան մէջ, ուստի և վարւել է լիակատար բարեխղճութեամբ, տպագրելով այդ մեղադրանքը։

Հինգերորդ հարցին Ատեանը պատասխանում է հաստատաբար։ Ի նկատի ունենալով, որ մեղադրանքը ղետեղւած է եղել յեղափոխական կուսակցութեան

կենտրոնական օրգանում, որ նրա արժանահաւատութիւնը յենւել է բացառապէս նրա հեղինակութեան վրայ և որ կուսակցութիւնը ընդունել է իր վրայ մեղադրանքի ամբողջ պատասխանատուութիւնը, Ատեանը, գտնում է, որ „Դաշնակցութիւնը„ պարտաւոր էր, նախ քան իր հրատարակումը, տեղեկացնել դրա մասին Սպ. Սպանդարեանին։ Այդ ձևական պարտաւորութեան կատարումը ներկայ դէպքում կարող էր ապահովել կուսակցութիւնը ակամայ սխալից, իսկ Սպանդարեանին՝ նրա բարի անունը արատաւորող մեղադրանքի ծանր հետևանքներից։

Ինչ վերաբերում է Սպ. Սպանդարեանի յարուցած հարցին, թէ „Դաշնակցութիւնը“ պարտաւոր է նրան դրամական հատուցում այն վնասների համար, որ պատճառել է նրան յիշեալ հրատարակութիւնը, — Դատարանը, հնարաւորութիւն չունենալով որևէ պատասխան տալու գործի մէջ եղած տեսակների հիման վրայ և թոյլատրելի չէը համարելով ձգձգել գործի աւարտումը դրամական յաւակնութիւնների քննութեամբ, որոշեց։

առաջարկել Սպ. Սպանդարեանին և „Դաշնակցութեան“ լուծել սոյն խնդիրը իր լիակատար ծաւալով, իրաւախոհութեան (արբիտրաժ) ճանապարհով, ի դէմս Ատեանի նախագահի կամ նրա ցուցմունքով՝ անդամներից որևէ մէկի։

Ներկայ որոշումը ընդունուած է դատաւորների կողմից միաձայն և ստորագրուած է բոլոր երեքի ձեռքով։ „Դաշնակցութեանը“ և Սպ. Սպանդարեանին տրւում է մի մի պատճէն, ստորագրութեամբ նախագահի և այն դատաւորների, որոնք յանձնումի միջոցին գտնւում են Պարիզում։

„Դաշնակցութիւնը պարտաւորւում է հրատարակել ներկայ որոշումը ամբողջութեամբ „Դրօշակ“-ի մօտակայ համարում։ Սպ Սպանդարեանին իրաւունք է տրւում՝ հրատարակել նոյն որոշումը ամբողջութեամբ իր ցանկացած թերթերի մէջ։

Դատավճիռը իր վերջնական ձևով կը պատրաստւի Ատեանի ձեռքով և կը հաղորդւի կողմերին՝ ներկայ տարւայ օգոստոսի վերջին։

Ստորագրած

Նախագահ Ատեանի

Ա. ՍՏԱԼ

Անդամ Ատեանի

Բ. ԻԳՕՐԵԻ

Պարիզ
20 յուլիս 1911

---

Ներկայ դատավճռի հրատարակումը ուշացաւ „Դրօշակ“ի ուշանալու պատճառով։ Դատավարութեան մանրամասն արձանագրութիւնը, որ տակաւին պատրաստ չէ և որ գուցէ կարողանայ լոյս սփռել այդ մութ գործի մի քանի խորշերի վրայ,—կը հրատարակւի մօտ ապագայում, Միջկուսակցային Ատեանի ձեռքով։

Առայժմ տպագրելով սոյն հակիրճ դատավճիռը, հարկ ենք սեպում հաղորդել ի գիտութիւն հասարակութեան, որ խնդրի ամենակարևոր հանգոյցը—ինչո՞ւ արդեօք Ռուսական բարձրագոյն Ոստիկանական հաստատութիւնը իր թղթերի մէջ արձանագրած է „Նորդարի“ի խմբագիր Սպանդար Սպանդարեանի անունը — որ այդ հանգոյցը երկու ամսւայ մանրազնին քննութիւնից յետոյ ևս մնում է դեռ, տարաբախտաբար, անլուծելի՝ թէ մեզ և թէ Ատեանի համար։

Ասելացնենք նաև, իբրև անհրաժեշտ պարզաբանումն դատավճռի, որ հաստատուած է անձնական վկայութիւններով և մեղադրեալի սեփական խոստովանութեամբ, դատարանի առջև և նրանից դուրս, որ Սպանդար Սպանդարեանի աւագ եղբայրը, Օդեսսայի ներկայ ցենզօրական օգնական Կոստանդին Սպանդարեանը ծառայել է մի ժամանակ — ներկայի մասին չենք կարող ասել, թէև պաշտօնն ինքնին վատ վկայութիւն է — իբրև լրտես-խուզարկու, իբրև գործակալ-աշխատակից Ռուսական բարձր Ոստիկանութեան՝ հայ յեղափոխական շարժումների վերաբերմամբ՝ և այսօր նա, Թիւթիւնջիեվների ու Ամբրէների այդ արժանաւոր շառաւիղը, մատնուած է հասարակական դատաստանին։

Հարկ կա՞յ շեշտելու, իբրև եզրակացութիւն, որ „Դաշնակցութեան“ բազմապիսի հակառակորդների չարամիտ, աչառոտ գաղտասուքները խորտակուեցին դատարանի որոշումով, որ „Դրօշակ“ի խմբագրութեան բարեխղճութիւնը հրատարակւեց՝ վեր ամեն կասկածից ու ամբաստանութիւնից, որ այդ խմբագրութիւնն ունէր իրաւունք ճանաչելու „Նոր-Դար“ի Սպանդար Սպանդարեանին իբրև լրտես-խուզարկու, ունէր նաև իրաւունք հրատարակելու մեղադրանքը։

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ նախ քան այդ հրատարակումը մենք պէտք է տեղեկացնէինք Սպանդար Սպանդարեանին, այսինքն մի մարդու, որի լրտես և մատնիչ լինելու հանգամանքի մէջ կատարելապէս համոզուած լինելու հիմքեր ունէինք — Ատեանի վկայութեամբ իսկ — այդ էլ թողնում ենք ընթերցողների դատողութեան, միանգամայն հպատակւելով հանդերձ Միջկուսակցային Ատեանի որոշումին, ինչպէս որ պարտաւորւել էինք սկզբում՝ այդ Ատեանը կազմակերպելու միջոցին։

«ԴՐՕՇԱԿ»

---

## ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Հ. Յ. Դաշնակցութեան Զ.-րդ Ընդհանուր Ժողովի որոշումով՝ Կուսակցութեան պաշտօնական օրգան „Դրօշակ“ը առաջիկայ 1912 թուի յունուարէն սկսած պիտի հրատարակւի կրկնակի ծաւալով և աշխատակցութեամբ կուսակցական ձեռնհաս ուժերու։ „Դրօշակ“ը այսուհետև պիտի ունենայ—նոյն Ընդհանուր Ժողովի որոշմամբ—իր գրական-յեղափոխական բաժինը, ինչպէս նաև տեղ պիտի տայ հայ յեղափոխական-պատմական տեսութիւններու, յուշերու, մենագրութիւններու և այլն։

Կը յանձնարարենք մեր մարմիններուն, ընկերներուն և բոլոր ընթերցողներուն՝ ղրկել մեզ անյապաղ բաժանորդագիրը (հինգ ֆրանկ տարեկան), որպէս զի յունուարէն թերթը առաքւի կանոնաւորապէս։ Զրի կամ ապառիկ առաքումները բացարձակապէս դադարեցուած են։

«ԴՐՕՇԱԿ»ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հասցէ՝ *Réd. du „DROSCHAK“, Genève (Suisse)*